ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 20-Լ «30» ապրիլի 2021

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ (7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Համաշխարհային պատմություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (7-12-րդ դասարաններ)՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

30.04.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**Հավելված**

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**

**2021 թվականի ապրիլի -ի N հրամանի**

# «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ

# ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

# (7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

## «ՀԱՄԱՇԽԱՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

«Համաշխարհային պատմություն» առարկան նպատակ ունի նպաստել սովորողների աշխարհայացքի ընդլայնմանը և արժեքային համակարգի ամբողջացմանը, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, սոցիալապես ակտիվ, պատասխանատու և պահանջատեր քաղաքացու ձևավորմանը, նրանց հետագա կրթությանը, մասնագիտական կողմնորոշմանը կամ աշխատանքային գործունեությանը նախապատրաստելուն՝ ելնելով հարափոփոխ աշխարհում համամարդկային արժեքներով, հայրենասիրության ու քաղաքացիական ոգով դաստիարակելու անհրաժեշտությունից:

Հիմնական (միջին) դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի ուսուցման նպատակն է՝

- Մեկնաբանի մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և գաղափարական փոփոխությունները, վերլուծի դրանց իրականացման գործում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը:
- Քննարկի համաշխարհային գործընթացները և դրանց ազդեցություններն առանձին տարածաշրջանների վրա և ընդհակառակը:
- Հետազոտի անհատ-հասարակություն միջավայր փոխազդեցությունն ու փոխկապվածությունը:
- Զարգացնի ակտիվ, բանիմաց և պատասխանատու քաղաքացու կերտմանը միտված գիտելիքներ և հմտություններ:
- Զարգացնի քննական վերլուծական միտքը պատմական տարբեր աղբյուրների վերլուծության ու մեկնաբանման հիման վրա՝ ձևավորելով պատմական մտածողություն:

Միջնակարգ (ավագ) դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի ուսուցման նպատակն է՝

- Վերլուծի մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունները, երևույթները, գործընթացները, գաղափարները, հասկացությունները՝ ըստ հասարակական գործունեության բոլոր հիմնական ուղղությունների:
- Ձևավորի պատմության ուսումնասիրության և վերլուծության համար անհրաժեշտ կարողություններ:
- Նպաստի անհրաժեշտ սոցիալական հմտություններով ու կարողություններով օժտված անձի ձևավորմանն ու կայացմանը, որը գիտակցում է հիմնարար հոգևոր արժեքների առաջնայնությունը և ձգտում է սեփական կրթական մակարդակի բարձրացմանը:
- Զարգացնի պատմական ու տրամաբանական մտածողությունը, պատճառահետևանքային կապեր գտնի պատմական գործընթացներում, պատմական ու հասարակական տարբեր իրադարձությունների, երևույթների միջև, հասկանա ու մեկնաբանի տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման ընթացքը, բնույթը, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, դրանք պայմանավորող գործոնները:
- Գնահատի և արժևորի համաշխարհային քաղաքակրթական ձեռքբերումները, հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության անդաստանում:

## 2. ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պատմությունը անհատի, ազգի և ողջ մարդկության հիշողությունն է: Ինչպես յուրաքանչյուր անհատի պատմություն պայմանավորված է նրա անհատականությամբ, այնպես էլ համայն մարդկության պատմությունը ժամանակակից ձեռքբերումների մարմնավորումն է: Համաշխարհային պատմության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս տեսնելու մարդկության զարգացման ուղին՝ քաղաքակրթությունների ձևավորումից մինչև գլոբալ փոխազդեցություններ, նախապատմական ժամանակաշրջանից մինչև հետարդյունաբերական շրջանի գիտատեխնիկական նվաճումներ: Հնարավորություն է տալիս հասկանալու և արժևորելու մշտապես փոփոխվող աշխարհի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացները և դրանցում դերակատարում ունեցած անհատներին: Այս ամենի արդյունքում անձը մարդուց վերածվում է անհատի և գիտակցում է իր տեղը սերունդների հերթափոխում՝ խորապես ըմբռնելով իր՝ որպես պատասխանատու քաղաքացու գոյության իմաստը: Սույնով պայմանավորված՝ «Համաշխարհային պատմություն» առարկան հանրակրթության անքակտելի մասն է և անցյալի ու ներկայի պատմական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները կապող կարևորագույն դերակատարում ունի:

## 3.ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 3.1. Հանրակրթական հիմնական ծրագրի համաշխարհային պատմություն առարկայի վերջնարդյունքները

**7.1.1** Վերլուծի հնագույն քաղաքակրթությունները, դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, համեմատի միմյանց հետ, գնահատի դրանց ազդեցությունը մեր օրերի վրա:
**7.1.2.** Վերլուծի և համակարգի հնագույն քաղաքակրթոյթունների ձեռքբերումները. քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական:
**7.1.3.** Ուսումնասիրի հին քաղաքակրթությունները և դրանց կողմից ժամանակի մարտահրավերները հաղթահարելու գործընթացները, ձևավորի բանիմաց արժեհամակարգ մարտահրավերներ արժեհամակարգի վերաբերյալ դիտարկելով այն որպես հասարկության զարգացման կարևոր բաղադրիչ:
**7.1.4.** Ուսումնասիրի հնագույն քաղաքակրթություններին վերաբերվող զանազան աղբյուրները՝ ձևավորի հետազոտական հմտություն:
**7.1.5** Ուսումնասիրելով իր համայնքը հավաքագրի և ամբողջացնի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները, որոնք հիմք են հանդիսացել իր համայնքի գործունեության համար:
**7.2.1** Կուսումնասիրի հունական քաղաքակրթության ձևավորման և զարգացման գործընթացները, այդ քաղաքակրթության այն ձեռքբերումները, որոնք ազդել են տարբեր քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման վրա:
**7.2.2** Համեմատելով և համադրելով հունական քաղաքակրթության տարբեր ձեռքբերումները՝ կձևավորի հնարամտության արժեհամակարգի վերաբերյալ իմացություն:
**7.2.3** Համագործակցելով կուսումնասիրի տարբեր պատմական աղբյուրներ:
**7.2.4** Կուսումնասիրի և կներկայացնի իր համայքնում գոյություն ունեցող այն գաղափարները և երևույթները, որոնք ձևավորվել են հունական քաղաքակրթությունում:
**7.3.1** Կուսումնասիրի Հին Հռոմեական քաղաքակրթության ձևավորումը, զարգացումը և անկումը, դրա ունեցած դերը եվրոպական քաղաքակրթության և արդի աշխարհի վրա:

**7.3.2** Համագործակցային հետազոտական, նախագծային աշխատանքների միջոցով կկարողանա ներկայացնել և քննարկել այն գործընթացները և գաղափարները, որոնք ձևավորեցին հռոմեական քաղաքակրթությունը, հանգեցրին դրա զարգացմանը և եվրոպական ու արդի աշխարհի վրա դրա դերի ազդեցությանը:
**7.3.3** Համագործակցային աշխատանքների շնորհիվ կմեկնաբանի այն մարտահրավերները, որոնց բախվում էր հռոմեական քաղաքակրթությունը, կտարբերակի այն մարտահրավերները, որոնք հաղթահարեց կամ չհաղթահարեց հռոմեական քաղաքակրթությունը:
**7.4.1** Համագործակցային նախագծային աշխատանքների միջոցով կուսումնասիրի իր համայնքը և կդասակարգի այն գաղափարները կամ երևույթները, որ ունեցել է հռոմեական քաղաքակրթությունն իր համայնքի վրա: Կուսումնասիրի Արևելքի և Արևմուտքի մի շարք քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման և կայացման ուղիները, այն պայմանները և գործընթացները, որոնք հանգեցրին բազմաբնույթ քաղաքակրթությունների ձևավորմանը:
**7.4.2** Կուսումնասիրի Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային բազմազանությունը՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք բազմազանության արժեհամակարգի վերաբերյալ:
**7.4.3** Բազմաթիվ աղբյուրագիտական տեղեկությունների վերլուծության հիման վրա կիրառելով ԾՆԱՍ (ծագում, նպատակ, արժեք, սահմանափակում) մոդելը՝ նախագծային աշխատանքների միջոցով կներկայացնի այդ հասարակությունների կացութաձևերը:
**7.4.4** Դաս-էքսկուրսիաների միջոցով կծանոթանա և կներկայացնի իր մտորումները, տպավորությունները արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների մշակույթի վերաբերյալ: Կվերլուծի այն գործոնները և պատճառահետևանքային կապերը, որոնք հանգեցնում են հասարակությունների փոփոխություններին:
**7.5.1** Կտարբերակի այն գործոնները և պատճառահետևանքային կապերը, որոնք նպաստում են որոշ հասարակությունների կերպափոխմանը և արդիականացմանը կամ թուլացմանն ու կործանմանը:
**7.5.2** Ուսումնասիրելով տարբեր պատմական և մեդիա աղբյուրներ՝ կտարբերակի և կհամեմատի և կհակադրի պատմական օրինակները, երբ  հասարակությունները կարողացել են հաղթահարել ժամանակի մարտահրավերները և տվել իրենց լուծումները:
**7.5.3** Կվերլուծի և կներկայացնի, թե միջնադարյան հասարակությունների որ մարտահրավերներին է իր համայնքն այժմ բախվում և ինչ լուծումներ է տալիս այդ մարտահրավերներին:
**8.1.1** Կվերլուծի և կմեկնաբանի աշխարհագրական մեծ հայտնագործությունների, Վերածննդի, Ռեֆորմացիայի, գիտական հեղափոխության և լուսավորության գաղափարների ձևավորման և զարգացման նախադրյալները և դրանց հասարակությունների վերափոխման ուղիները:
**8.1.2** Կներկայացնի այն գաղափարերը և գործընթացները, որոնք արդիականացրեցին հասարակությունները՝ ձևավորելով խոհեմ/բանական արժեհամակարգ այդ գաղափարների և գործընթացների վերաբերյալ:
**8.1.3** Կքննարկի հասարակությունների վերափոխման վերոհիշյալ գործընթացները:
**8.1.4** Կհետազոտի իր համայնքը և կգտնի ու կներկայացնի այն գաղափարները, որոնք գործում են համայանքում և գալիս են պատմական գործընթացներից:
**8.2.1** Կհետազոտի արդյունաբերական և ավանդական հասարակությունների զարգացման ուղիները, գործընթացները, որոնք հանգեցրերին արդյունաբերական հասարակությունների զարգացմանը և առաջնորդությանը աշխարհաքաղաքական գործընթացներում:
**8.2.2** Կուսումնասիրի արդյունաբերական հասարակությունների զարգացման գործընթացները և ձեռքբերումները, կձևավորի ողջամիտ և հարգալից վերաբերմունք արդիականացում հասկացության վերաբերյալ:

**8.2.3** Ինքնուրույն և թիմային աշխատանքների միջոցով կուսումնասիրի տարբեր արդյունաբերական և ավանդական հասարակությունների զարգացման ուղիները, պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:
**8.2.4** Կներկայացնի որևէ աշխատանք այն երևույթների կամ գաղափարների մասին, որոնք առկա են իր համայնքում և ձևավորվել են կամ արդյունք են արդյունաբերական հասարակությունների:
**8.3.1** Կհետազոտի նորդարյան հասարակությունների վերափոխումների ուղիները և գործընթացները, դրանց ազդեցությունը աշխարհաքաղաքական գործընթացների վրա:
**8.3.2** Կուսումնասիրի և կմեկնաբանի բարեկեցության այն գաղափարները, որոնք ձևավորվեցին և առաջնորդեցին նորդարյան հասարակություններին:
**8.3.3** Թիմային և խմբային աշխատանքների միջոցով կքննարկի և կհիմնավորի նորդարյան հասարակությունների զարգացման տարբեր ուղիները:
**8.3.4** Կուսումնասիրի և կհամեմատի իր համայնքի գործընթացները նորդարյան հասարակությունների գործընթացների հետ՝ վեր հանելով նմանությունները և տարբերությունները:
**8.4.1** Կուսումնասիրի և կվերլուծի հասարակությունների զարգացման այն տեսլականները, որոնք ձևավորվեցին նոր ժամանակներում և ուղղորդեցին որոշ հասարակությունների հետագա զարգացումը:
**8.4.2** Վերլուծական քննական աշխատանքների միջոցով կուսումնասիրի, կքննարկի *բարեկեցություն* հասկացությունը և յուրաքանչյուր հասարակության՝ դրան հասնելու գաղափարական հենքը:
**8.4.3** Կուսումնասիրի տարբեր գաղափարախոսությունների տեսությունները և կիրառման ուղիները, կքննարկի դրանք և կբացատրի յուրաքանչյուր հասարակության որևէ գաղափարախոսության ընտրությունը:
**8.4.4** Կուսումնասիրի, կհիմնավորի, թե իր հասարակությունում որ գաղափարախոսությունները կամ դրանց բաղադրիչներն են գործում և ինչպես՝ պատրաստելով հինգ հիմնավորումից և օրինակներից բաղկացած զեկույց:
**9.1.1** Կհետազոտի XIX-XX դարերի առանցքային, պատմական հասարակական-քաղաքական գործընթացները, որոնք հանգեցրին աշխարհի վերափոխմանը և վերաձևավորմանը:
**9.1.2** Կհետազոտի և կվերլուծի այն հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային նորարարությունները, որոնք հանգեցրին որոշ հասարակությունների աննախադեպ առաջընթացին և այնուհետև ռազմական բախումների:
**9.1.3** Ծանոթանալով տարբեր պատմական աղբյուրների տեղեկություններին՝ կվերլուծի և կքննարկի պատմական այն գործընթացները, որոնք հանգեցրին աշխարհի վերաձևմանը և վերափոխմանը:
**9.1.4** Կուսումնասիրի սեփական համայնքը և կվերլուծի ու կներկայացնի այն գործընթացները, որոնք տեղի են ունեցել ուսումնասիրվող թեմայի ժամանակ և ազդել են իր համայնքի ձևավորման վրա:
**9.2.1** Կհետազոտի և կվերլուծի Առաջին աշխարհամարտից հետո ընթացող աշխարհաքաղաքական գործընթացները, Երկրորդ աշխարհամարտը և դրա ավարտը:
**9.2.2** Կուսումնասիրի Ազգերի լիգայի գործունեությունը և այն գործընթացները, որոնք հանգեցրին խաղաղության խախտմանը Առաջին աշխարհարմարտից հետո, և խաղաղության վերահաստատման նոր գործընթացները և որոշումները:
**9.2.3** Թիմային աշխատանքների միջոցով կուսումնասիրի պատմական աղբյուրներ, կվերլուծի և կքննարկի տարբեր պատմական տեսակետներ՝ հասկանալու համար տվյալ ժամանակաշրջանի գործընթացները:

**9.2.4** Կուսումնասիրի սեփական ընտանիքի և համայնքի պատմությունը, վեր կհանի այն անձանց պատմությունը, որոնք ականատես են եղել այդ ժամանակաշրջանի պատմությանը, գրի կառնի ու դասարանին կներկայացնի առնվազն երկու ժամանակակցի պատմություն ու վերհուշը:
**9.3.1** Կհետազոտի Սառը պատերազմը, հասարակական-քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական ու մշակութային գործընթացները և դրանց ազդեցությունը արդի աշխարհի ձևավորման վրա:
**9.3.2** Կուսումնասիրի այն նորարարական գաղափարները (տնտեսական, ռազմական, սոցիալական ևն), որոնք ձևավորվեցին և առաջնորդեցին Սառը պատերազմի դարաշրջանում:
**9.3.3** Կուսումնասիրի և կքննարկի տարբեր պատմական աղբյուրներ՝ զարգացնելով քննական մտածողություն:
**9.3.4** Կուսումնասիրի իր համայնքը և ներկայացնի այն գործընթացները, որոնք ձևավորվել են Սառը պատերազմի տարիներին և ազդեցություն են ունեցել համայնքի վրա (և՛ դրական, և՛ բացասական):
**9.4.1** Կվերլուծի և կքննարկի Սառը պատերազմից հետո աշխարհի հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացները:
**9.4.2** Կուսումնասիրի և կվերլուծի հետսառըպատերազմյան գործընթացները, որոնք ընթանում էին երկրների և դաշինքների առաջնորդության համար:
**9.4.3** Կուսումնաիրի, թե ինչպես և ինչ լուծումնր էին գտնում երկրները և կառույցները ժամանակի մարտահրավերները հաղթահարելու համար (գիտության զարգացում, դաշինքների ստեղծում և այլն):
**9.4.4** Աշակերտը ձեռք կբերի առաջնորդի հատկանիշներ, որը կարողանում է պատմաքաղաքական տարբեր անցուդարձերի նետած մարտահրավերները ճիշտ վերլուծել և գտնել լուծումներ:
**9.4.5** Կուսումնասիրի և բանավոր կամ գրավոր կներկայացնի ու կվերլուծի իր համայնքի այն գաղափարներն ու կառույցները, որոնք ստեղծվել են հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում:
**9.5.1** Կուսումնասիրի հետարդյունաբերական շրջանի գիտատեխնիկական նվաճումները և դրանց ազդեցությունները նորագույն շրջանի հասարակական-քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումների վրա:
**9.5.2** Կհետազոտի գիտատեխնիկական նվաճումների դերը հասարակությունների արդիականացման գործում:
**9.5.3** Գիտատեխնիկական նվաճումների հետազոտությունները կիրականացնի համագործակցելով ՝զարգացնելով համագործակցային հմտությունը:
**9.5.4** Կձևավորվի համագործակցային վերաբերմունք հասարակության առջև ծառացած գիտատեխնիկական մարտահրավերները հաղթահարելու գործում:
**9.5.5** Կուսումնասիրի իր համայնքը և կվերլուծի գիտատեխնիկական այն նվաճումները, որոնք առկա են իր առօրյա կյանքում:

### 3.2. Հանրակրթական միջնակարգ ծրագրի համաշխարհային պատմություն առարկայի վերջնարդյունքները

**10.1.1** Կդասակարգի պատմական իրադարձությունները՝ ըստ պատմական փուլերի, պատմագիտական դպրոցների և հասարակական-քաղաքական բնագավառների:
Համատեքստում կկիրառի և կմեկնաբանի պատմական եզրույթները և գործընթացները:
**10.1.2** Կձևավորի հետաքրքրություն անցած պատմական գործընթացների և արդի գործընթացների նկատմամբ:

**10.1.3** Կսովորի պատմական աղբյուրների ուսումնասիրման և վերլուծման (ծագում, նպատակ, արժեք, սահմանափակում-ԾՆԱՍ) մոդելը՝ ձևավորելով պատմական աղբյուրների վերլուծման քննական վերլուծական մոտեցում:
**10.2.1** Կհետազոտի հին արևելյան հասարակությունների ձևավորման և զարգացման գործընթացները, կհամեմատի և կհամադրի այդ հասարակությունները, կարժևորի դրանց ազդեցությունը համաշխարհային պատմական արդի գործընթացների վրա:
**10.2.2** Կհետազոտի այն համակարգերը, որոնք ձևավորվեցին հին արևելյան հասարակություններում: Կձևավորի համակողմանի գիտելիք *համակարգ* հասկացության վերաբերյալ:
**10.2.3** Կհետազոտի հին արևելյան հասարակությունների վերաբերյալ զանազան պատմական աղբյուրներ ՝ձևավորելով ստեղծագործական հմտություն:
**10.2.4** Կուսումնասիրի իր համայնքը՝ փաստերով հիմնավորելով այն երևույթները, որոնք առկա են իր համայնքում և առնչություններ ունեն հին արևելյան հասարակությունների համակարգի հետ:
**10.3.1** Կմեկնաբանի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ձևավորման ու զարգացման նախադրյալները, ընթացքը, կվերլուծի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, արդի աշխարհում նրանց թողած ազդեցությունները: Կհամեմատի ու կհամադրի Հին արևելյան անհետացած և գոյատևող քաղաքակրթությունները Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների հետ, ինչպես նաև Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունները միմյանց հետ, կբացահայտի օրինաչափություններն ու առանձնահատկությունները:
**10.3.2** Կհետազոտի անտիկ քաղաքակրթությունների հնարամիտ ձեռքբերումները, որոնք նպաստում էին այդ հասարակությունների արագ զարգացմանը:
**10.3.3** Հետազոտելով զանազան պատմական մեդիա աղբյուրներ՝ կձևավորի հետազոտական հմտություններ:
**10.3.4** Ուսումնասիրելով իր համայնքը՝ կմեկնաբանի անտիկ հասարակությունների թողած ազդեցությունն այդ համայնքի վրա:
**10.4.1** Կմեկնաբանի համաշխարհայնացման դրսևորման ձևավորման ու զարգացման նախադրյալները, ընթացքը:
**10.4.2** Կհամեմատի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունները հելլենիզմի հետ, կբացահայտի օրինաչափություններն ու առանձնահատկությունները:
**10.4.3** Վեր կհանի և կպարզաբանի հելլենիստական ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը, կարժևորի հելլենիստական դարաշրջանի ձեռքբերումներն ու բացթողումները, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
**10.4.4** Կգնահատի հելլենիստական դարաշրջանի քաղաքակրթական ձեռքբերումները համաշխարհային մշակույթի համատեքստում, կգիտակցի մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:
**10.4.5** Կճանաչի հելլենիստական ժամանակաշրջանի ականավոր գործիչներին, կբնութագրի և կհամեմատի նրանց, կգնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
**10.4.6** Կվերլուծի և կգնահատի հելլենիստական ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր երևույթները, փաստերը և իրադարձությունները, կկանխատեսի ու կպատճառաբանի պատմական կամ հասարակական կարևոր իրադարձությունների և երևույթների արդյունքներն ու հետևանքները:

**10.4.7** Կապեր կգտնի ժամանակակից պատմական գործընթացներում առկա պատմական կամ հասարակական կարևոր իրադարձությունների կամ երևույթների միջև, կհամեմատի դրանք, կգտնի իր և սերունդների կապը պատմության մեջ:
**10.4.8** Քննական մոտեցմամբ կհավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, կվերլուծի դրանք և կփաստարկի դրանցում զետեղված տեղեկույթի արժանահավատությունը, աղբյուրագիտական հենքով իրականացված քննական վերլուծությամբ կհիմնավորի սեփական դիրքորոշումներն ու տեսակետները, աղբյուրներն օգտագործելիս կկատարի հղումներ:
**10.4.9** Տարբեր ժամանակաշրջաններում պատմության ու հասարակական հիմնահարցերի և առանցքային խնդիրների վերաբերյալ, իր ապրումների, շրջապատող աշխարհի, մարդկանց ու իրեն հուզող, հետաքրքրող պատմական ու հասարակական երևույթների, իրադարձությունների վերաբերյալ կկատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, խնդիրներ կառաջադրի և լուծումներ ներկայացնի:
**10.5.1** Կհետազոտի միջնադարյան տարբեր քաղաքակրթությունները՝ համեմատելով և համադրելով դրանց ձևավորման, զարգացման առանձնահատկությունները և ազդեցությունը արդի աշխարհի ձևավորման վրա:
**10.5.2** Կհետազոտի միջնադարյան քաղաքակրթությունները, կձևավորի գիտակից արժեհամակարգ միջնադարյան քաղաքակրթությունների ձեռքբերումների վերաբերյալ:
**10.5.3** Կվերլուծի և կքննարկի զանազան պատմական աղբյուրներ, կզարգացնի քննական մտածողությունը:
**10.5.4** Կուսումնասիրի իր համայնքը, կհամեմատի, կհակադրի և կմեկնաբանի արդի և միջնադարյան հասարակությունների սոցիալական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը:
**10.6.1** Կհետազոտի, կվերլուծի նոր ժամանակների պետական, հասարակական, սոցիալական և մշակութային զարգացումներն ու գործընթացները:
**10.6.2** Կուսումնասիրի նոր դարերի հասարակությունները, կարժևորի առաջնորդության արժեհամակարգը, որը հանգեցրեց նոր դարերի մի շարք հասարակությունների զարգացմանը:
**10.6.3** Կհետազոտի տարբեր պատմական մեդիա աղբյուրներ, կմեկնաբանի տարբեր հասարակությունների քաղաքակրթական մարտահրավերների հաղթահարման ուղիները՝ զարգացնելով խնդիրներ լուծելու հմտությունը:
**10.6.4** Կուսումնասիրի սեփական համայնքը, կառանձնացնի այն մարտահրավերները, որոնց բախվում է իր համայնքը, և կկազմի խնդիրների լուծման իր տարբերակները:
**10.7.1** Կհետազոտի նոր ժամանակներում ձևավորված մշակութային արժեքները և դրանց ազդեցությունը հասարակության զարգացման տարբեր բնագավառների վրա:
**10.7.2** Կուսումնասիրի նոր դարերի մշակույթը, կձևավորի ստեղծարար արժեհամակարգ:
**10.7.3** Կհետազոտի զանազան պատմական մեդիա աղբյուրներ մշակույթի վերաբերյալ, կայցելի հեռավար բաց թանգարաններ և կլսի զանազան արվեստի գործերի մեկնաբանությունները:
**10.7.4** Կուսումնասիրի սեփական համայնքը, կհամեմատի իր մշակույթի արժեքները նորդարյան հասարակության մշակութային արժեքների հետ:
**11.1.1** Կվերլուծի աշխարհակալությունների ստեղծման, զարգացման և կործանման գործընթացները, կհամեմատի և կհամադրի տարբեր աշխարհակալությունները, կգնահատի այդ աշխարհակալությունների ազդեցությունն արդի աշխարհի բազմաբնույթ գործընթացների վրա:
**11.1.2** Կվերլուծի, կքննի տարբեր կայսրությունների ձևավորած կարողությունները տնտեսական, քաղաքական, մշակութային և սոցիալական բնագավառներում:
**11.1.3** Ուսումնասիրելով և քննարկելով տարբեր աշխարհակալությունները՝ կձևավորի հետազոտական հմտություններ և վերլուծական կարողություն:

**11.1.4** Կուսումնասիրի իր համայնքը և կմեկնաբանի աշխարհակալությունների ազդեցությունն իր համայնքի վրա:
**11.2.1** Կվերլուծի, կքննարկի ազգային պետությունների ստեղծման նախադրյալները, ձևավորման գործընթացները և զարգացման ուղիները, կհամեմատի և կհամադրի տարբեր ազգային պետությունների ձևավորման գործընթացները:
**11.2.2** Կուսումնասիրի տարբեր ազգային պետությունների պատմությունը, կվերլուծի այն կառույցները, որոնք հանգեցրին ազգային պետությունների կայացմանը (իրավական համակարգեր). կրոն, լեզու, միասնական պատմություն:
**11.2.3** Կուսումնասիրի այն խնդիրները, որոնք լուծեցին ազգային պետությունները ձևավորման և կայացման ճանապարհին:
**11.2.4** Դիտարկելով սեփական համայանքը՝ կվերլուծի ազգային պետության բաղադրիչների առկայությունը և գործունեությունն այդ համայնքում:
**11.3.1** Կմեկնաբանի ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ձևավորման ու զարգացման նախադրյալները, ընթացքը, կվերլուծի ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, արդի աշխարհում նրանց թողած ազդեցությունները:
**11.3.2** Կհամեմատի ամբողջատիրական և միակուսակցական պետությունները միմյանց և աշխարհակալությունների (կայսրություններ) ու ազգային պետությունների հետ, կբացահայտի օրինաչափություններն ու առանձնահատկությունները:
**11.3.3** Վեր կհանի և կպարզաբանի ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը, կարժևորի ամբողջատիրական և միակուսակցական պետությունների ձեռքբերումներն ու բացթողումները, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
**11.3.4** Կուսումնասիրի և կքննարկի այն մարտահրավերները, որոնք հանգեցրին այդ համակարգերի ձևավորմանն ու կայացմանը:
**11.3.5** Զույգերով, թիմերով կամ խմբային հետազոտական աշխատանքների միջոցով կուսումնասիրի թեման՝ զարգացնելով համագործակցային հմտություններ:
**11.3.6** Կուսումնասիրի սեփական համայնքը, կվերլուծի ամբողջատիրական հասարակությունների ազդեցությունն իր համայնքի վրա:
**11.4.1** Կմեկնաբանի ժողովրդավարական պետությունների ձևավորման, զարգացման ուղիները, այն կառույցները, որոնք հիմք են դարձել այդ պետությունների ձևավորման համար:
**11.4.2** Կուսումնասիրի ժողովրդավարական պետությունների պատմությունը, կվերլուծի *արդարություն* հասկացությունը և դրա դրսևորման ձևերը ժողովրդավարական պետություններում:
**11.4.3** Կուսումնասիրի ժողովրդավարական հասարակությունների զարգացման ուղիները, կվերլուծի ստեղծարար գաղափարների ազդեցությունն այդ հասարակությունների ձևավորման ընթացքում:
**11.4.4** Կուսումնասիրի սեփական համայնքը, կվերլուծի և կներկայացնի այդ համայնքում ժողովրդավարական կառույցների գործունեությունը:
**11.5.1** Կվերլուծի ու կքննարկի *հեղափոխություն* հասկացության տեսակները, որոնք տեղի են ունեցել հասարակության տարբեր բնագավառներում, տարբեր ժամանակներում:
**11.5.2** Կուսումնասիրի հեղափոխություն թեման, կարժևորի, կգնահատի հեղափոխության նորարարություն բաղադրիչը:
**11.5.3** Համեմատելով և համադրելով բազմաթիվ պատմական աղբյուրները՝ կձևավորի քննական մտածողություն:
**11.5.4** Ուսումնասիրելով իր համայնքը՝ աշակերտը կբացահայտի հեղափոխությունների ազդեցությունն այդ համայնքի վրա:

**11.6.1** Կմեկնաբանի հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բնույթի գաղափարախոսությունների ձևավորման, զարգացման և կիրառման գործընթացները և հետևանքները:
**11.6.2** Կուսումնասիրի տարբեր գաղափարախոսությունները, որոնց նպատակն էր հասնել մարդկության բարեկեցությանը՝ կիրառելով տարբեր միջոցներ:
**11.6.3** Կուսումնասիրի և կվերլուծի պատմական աղբյուրներ, որոնք մեկնաբանում են տարբեր գաղափարախոսությունները, և կառաջարկի խնդիրիների լուծման իր այլընտրանքային ուղիները:
**11.6.4** Կուսումնասիրի իր շրջապատը և մեկնաբանի, թե իր հետազոտած որ գաղափարախոսություններն են գործում իր համայնքում և ինչպես:
**12.1.1** Կմեկնաբանի *համագործակցություն* եզրույթը, դրա դրսևորումները հասարակության զանազան բնագավառներում և այն մարտահրավերները, որ բերում է այդ գործընթացը:
**12.1.2** Կմեկնաբանի *համագործակցություն* և *կոնֆլիկտ* հասկացությունները, այն մարտահիրավերները, որոնք ծագում են դրանց զանազան դրսևորումներում:
**12.1.3** Կվերլուծի *համագործակցություն* հասկացությունը փաստերի կիրառմամբ, կներկայացնի իր պատկերացմամբ հնարավոր լուծումներն այդ գործելակերպի կիրառման բացասական դրսևորումների դեպքում:
**12.1.4** Կուսումնասիրի իր համայնքը և կմեկնաբանի համագործակցության դրսևորումներն այդ համայնքում:
**12.2.1** Կուսումնասիրի հասարակության մեջ տարածաշրջանային, տնտեսական, բնապահպանական, կրոնա-գաղափարական կոնֆլիկտների ձևավորումն ու զարգացումը հասարակության զարգացման վրա դրանց հետևանքները:
**12.2.2** Կհետազոտի և կվերլուծի կոնֆլիկտների ձևավորման և զարգացման մեջ հնարամտության դերը՝ դիտարկելով այն որպես այլընտրանք կոնֆլիկտի լուծման համար:
**12.2.3** Կուսումնասիրի կոնֆլիկտների զանազան դրսևորումների վերաբերյալ հակասական աղբյուրները ՝ կատարելով վերլուծական աշխատանք:
**12.2.4** Կհետազոտի և կմեկնաբանի իր համայնքում առկա տարաբնույթ կոնֆլիկտներն ու դրանց ազդեցությունը:
**12.3.1** Կհետազոտի *պատերազմ* հասկացության բովանդակության փոփոխությունները պատմական տարբեր ժամանակներում, պատերազմների դրսևորման կերպափոխությունները և դրանց ազդեցությունները հասարակական կյանքի տարբեր բնագավառներում:
**12.3.2** Կհետազոտի և կվերլուծի պատերազմների մեջ *արդարություն* երևույթի դրսևորումները:
**12.3.3** Կհետազոտի տարբեր մեդիա աղբյուրները, կվերլուծի և կզարգացնի քննական մտածողություն:
**12.3.4** Կհետազոտի սեփական համայնքը՝ դիտարկելով և փաստագրելով պատերազմ երևույթի դրսևորումներն այնտեղ:
**12.4.1** Կվերլուծի համամարդկային հիմնախնդիրների տեսակները, կմեկնաբանի համամարդկային հիմնախնդիրների բնույթը, կհամեմատի տարբեր ժամանակաշրջանների համամարդկային հիմնախնդիրները, կվերլուծի համամարդկային հիմնախնդիրների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, կբացահայտի պատճառահետևանքային կապերը, կգնահատի հետևանքներն ու արդյունքները:
**12.4.2** Կհետազոտի համամարդկային հիմնախնդիրները, կվերլուծի և կմեկնաբանի այդ հիմնախնդիրների բերած մարտահրավերները՝ դիտարկելով դրանք որպես հասարակությունների զարգացման կարևոր բաղադրիչ:
**12.4.3** Կվերլուծի փաստեր և կառաջարկի սեփական լուծումներ՝ հիմնված համամարդկային հիմնախնդիրների վրա:

**12.4.4** Կվերլուծի իր համայնքը, կբացահայտի համայնքում առկա հիմնախնդիրները և կկազմի ծրագիր դրանց լուծման համար:
**12.5.1** Կվերլուծի արդի համաշխարհային զարգացման հիմնական միտումները, կմեկնաբանի հետարդյունաբերական (տեղեկատվական) հասարակության ձևավորման ընթացքը, տնտեսական զարգացման հեռանկարները, միասնականացման հեռանկարները և միջազգային կառույցների գործունեությունը, արդի աշխարհաքաղաքական զարգացումների օրինաչափություններն ու առանձնահատկությունները, XXI դարում քաղաքակրթության զարգացման հեռանկարները, կմեկնաբանի և կգնահատի փաստերը և իրադարձությունները, կբացահայտի պատճառահետևանքային կապերը, կգնահատի հետևանքներն ու արդյունքները:
**12.5.2** Կհետազոտի զանազան մեդիա աղբյուրներ՝ ձևավորելով բանիմաց արժեհամակարգ «գիտելիքի դարաշրջանի» հեռանկարների վերաբերյալ:
**12.5.3** Կհետազոտի զանազան տեղեկատվական աղբյուրներ՝ ձևավորելով մեդիագրագիտության հմտություններ:
**12.5.4** Կուսումնասիրի իր համայանքը և մեկնաբանի այդ համայնքում առկա մեդիագրագիտության բացթողումները՝ կազմելով դրանց վերացման իր ծրագիրը:
**12.6.1** Կվերլուծի արդի ժամանակաշրջանի համաշխարհային մշակույթը, համակեցության հարաբերությունները, տնտեսական և մշակութային կյանքը, կբացահայտի տարբեր ժամանակաշրջաններում դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները, կապեր կգտնի անցյալի հետ և կհամեմատի նախորդ ժամանակաշրջանների համապատասխան ոլորտների հետ:
**12.6.2** Կծանոթանա համաշխարհային մշակույթի զարգացման հեռանկարներին, կվերլուծի սեփական մշակույթի զարգացման հեռանկարները համաշխարհային մշակույթի համատեքստում՝ ձևավորելով հարգալից արժեհամակարգ սեփական մշակույթի նկատմամբ:
**12.6.3** Զույգերով, թիմային և խմբային աշխատանքների միջոցով կհետազոտի ու կմեկնաբանի համաշխարհային և սեփական մշակութային համակարգի ներկայիս զարգացման առանձնահատկությունները:
**12.6.4** Կուսումնասիրի սեփական համայնքը, կվերլուծի և կկազմի ծրագիր համայնքի մշակութային կյանքի ակտիվացման համար:

## 4. ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Համաշխարհային պատմական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացներին
- մարդկության պատմության ընթացքում տեղ գտած փոփոխություններին,
- մարդկության պատմության ընթացքում տեղ գտած գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի նվաճումներին,
- գլոբալ փոխազդեցությունների նկատմամբ սովորողների վերաբերմունքին,
- քաղաքակրթական և մշակութային գործընթացների ներկայացմամբ սովորողի մոտ արժեքային համակարգի ձևավորման սոցիալական նպատակներին,
- պատմական մտածելակերպի ձևավորմամբ՝ սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակներին,
- պատմական տեղեկատվության շարունակականության պահանջներին՝ նախկինում ուսումնասիրված նյութից մինչև ընթացիկ և դրան հաջորդող նյութը ակընկալվող կապին,

- տարբեր առարկաների (հայոց պատմություն, աշխարհագրություն, հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ, համաշխարհային գրականություն, հասարակագիտություն և այլն) հետ կապերին,
- ուսումնասիրվող երևույթների (անհատ, հասարակություն, նորարարություն, հեղափոխություն, պետություն, կոնֆլիկտ, մշակույթ) միջև գոյություն ունեցող բնական կապերին:

Առարկայի առանձնահատկությունը սովորողի պատմական, շրջահայաց մտածողության ձևավորումն ու զարգացումն է, որը հնարավորություն կտա նրան ըմբռնելու մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, հասկանալու դրանց իրականացման գործում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը, գնահատելու պատմական գործընթացների համատեքստում ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը, վերլուծելու գլոբալ փոխազդեցությունների դաշտում առկա գործընթացները, ծանոթանալու մշակութային միջավայրին և հասկանալու անհատ-հասարակություն-միջավայր փոխազդեցությունն ու փոխկապվածությունը:

«Համաշխարհային պատմություն» առարկայի մոտեցումները, սկզբունքներն ու ծրագրային փուլերը հիմնված են

1. *քաղաքակրթություն,*
2. *փոփոխություն,*
3. *գլոբալ փոխազդեցություն,*
4. *համակարգ*

հիմնական գաղափարների վրա, որոնք փոխկապվածության սկզբունքով քննության են առնում համաշխարհային պատմության ողջ շրջափուլը՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը:

«Համաշխարհային պատմություն» առարկան ուսուսմնասիրվում է հետևյալ 16 ենթահասկացությունների միջոցով.

«Կառավարում», «Զարգացում», «Փոփոխություն», «Համակարգ», «Անհատ», «Հայրենիք», «Պատճառ-հետևանք», «Հեռանկար», «Քաղաքակրթություն», «Հավատ», «Նորարարություն», «Ձև», «Ժամանակ, տեղ, տարածություն», «Հարաբերություններ», «Փոխկապակցվածություն», «Համագործակցություն»:

Ընդհանրական խաչվող հասկացություններ

Սովորողների մոտ աշխարհի համապարփակ և գիտականորեն հիմնավորված տեսակետ կառուցելու համար ներառվել են նաև ընդհանրական խաչվող հասկացություններ: Դրանք հասարակագիտության տարբեր ոլորտները կապելու միջոց են, քանի որ կիրառվում եմ հասարակագիտության և բնագիտության բոլոր ճյուղերում: Խաչվող հասկացությունները կազմակերպչական հենք են հանդիսանում հասասրակագիտական և բնագիտական տարբեր առարկաներից ստացված գիտելիքները փոխկապակցելու համար:

Ընդհանրական խաչվող հասկացություններն են՝

- անհատներ և հարաբերություններ
- կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ
- անհատական և մշակութային արտահայտում
- գիտատեխնիկական նորարարություն
- գլոբալիզացիա, կայունություն և փոփոխություն
- արդարություն և զարգացում
- օրինաչափություն
- պատճառ և հետևանք
- համակարգեր
- կառուցվածք և գործառույթ

## 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում:

**Դասավանդման մոտեցումներ**
«Համաշխարհային պատմություն» առարկայի ուսումնառության հիմքում դրված է հետևյալը.

1. Հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն (հասկացություններն առարկայի հիմքում ընկած մեծ գաղափարներն են, որոնք ժամանակ, տարածություն և մշակութային սահմանափակումներ չունեն):
2. Հմտություններ.

- սովորողի ուսումնական հմտությունների զարգացում. քննադատական, վերլուծական, հատազոտական, ստեղծագործական մտածողություն,
- հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացում,
- ինքնակազմակերպման հմտություն,
- խնդրահարույց իրավիճակների լուծման հմտության զարգացում:

3. Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն:
4. Տարբերակված ուսումնառություն:
5. Իրական կյանքին առնչվող և խնդրահարույց հարցերի հետազոտման վրա հիմնված ուսումնառություն:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**Հայտորոշիչ** (ախտորոշիչ) գնահատումը նախնական գնահատումն է, որի նպատակն է պարզել սովորողների նախնական գիտելիքները, կարողությունները կամ հմտությունները՝ մինչև դասավանդումը:

**Ուսուցանող գնահատումը** հաճախ կոչվում է նաև ձևավորող գնահատում կամ գնահատում ուսումնառության համար: Այսպիսի գնահատումն ուղղված է սովորողների ուսումնառության բարելավմանը: Այն հնարավորություն է տալիս ուսումնառության ընթացքում բացահայտելու սովորողի թույլ և ուժեղ կողմերը, սովորողներին ուղղորդելու և դասավանդման հետագա ընթացքը պլանավորելու համար:

**Ուսումնառության գնահատումը** հաճախ կոչվում է ամփոփիչ գնահատում: Դրա նպատակն է ձեռք բերել ապացույցներ և տվյալներ, որոնք ցույց են տալիս ուսումնառության արդյունավետությունը: Սովորաբար ամփոփիչ գնահատումն իրականացվում է ժամկետի (քառորդ, կիսամյակ) կամ թեմատիկ միավորի վերջում: Տարեվերջյան քննությունները նույնպես ամփոփիչ գնահատման օրինակներ են: Դրանք սովորաբար արվում են պաշտոնական գրանցման համար և հաշվետվական նպատակ ունեն:

**Ձևավորող (ուսուցանող) և ամփոփիչ** գնահատումն իրականացվում է նախապես հրապարակված չափանիշների և սանդղակների համաձայն:

Ստուգումն ու գնահատումը նախատեսվում է իրականցնել տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: Առարկայի ուսումնառության համար կարևորում ենք.

1. գիտելիքի,
2. հետազոտական մոտեցումների,

3. հաղորդակցական հմտությունների,
4. մտածողության ձևերի գնահատումը:

**Գնահատականի բաղադրիչները**

Հիմնական դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի գնահատականի 40%-ը պետք է կազմի հիմնական գաղափարների իմացությունը և ըմբռնումը, հմտությունների զարգացման մասնաբաժինը կազմելու է 30%-ը, 20%-ը՝ արժեհամակարգին, իսկ 10%-ը՝ կապը իրական կյանքի հետ առաջադրանքների ու հետազոտությունների պլանավորելուն և իրականացնելուն:
Ավագ դպրոցում «Համաշխարհային պատմություն» առարկայի գնահատականի 30%-ը պետք է կազմի հիմնական գաղափարների իմացությունը և ըմբռնումը, հմտությունների զարգացման մասնաբաժինը՝ 40%-ը, 20%-ը՝ արժեհամակարգին, իսկ 10%-ը՝ կապը իրական կյանքի հետ առաջադրանքների ու հետազոտությունների պլանավորելուն և իրականացնելուն:

**Հիմնական դպրոց**
**Առաջարկվող ժամաքանակներն ըստ դասարանների**

| | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|
| ժամաքանակ | 68 | 68 | 68 |
| Պահուստային ժամաքանակ | 8 | 8 | 8 |
| Դաս-էքսկուրսիա | 6 | 6 | 6 |

**7-րդ դասարան (Առաջարկվող ժամաքանակ՝ 68 ժամ)**

1. Քաղաքակրթությունների առաջացումը: Հին Եգիպտոս, Միջագետք (12 ժամ)
2. Հին Հունաստան (10 ժամ)
3. Հին Հռոմ (10 ժամ)
4. Քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում և Արևելքում (14 ժամ)
5. Միջնադարի ավարտը (12 ժամ)

| **Թեմա 1** |
|---|
| ***Քաղաքակրթությունների առաջացումը: Հին Եգիպտոս, Միջագետք (12 ժամ)*** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի և կմեկնաբանի հնագույն քաղաքակրթությունները, կձևավորի քննադատական մտածողություն և կգիտակցի առօրյա հասարակությունների վրա դրանց թողած ազդեցությունը: |
| **Վերջնարդյունք** |
| Գիտելիք |

7.1.1. Վերլուծի հնագույն քաղաքակրթությունները, դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, համեմատի միմյանց հետ, գնահատի դրանց ազդեցությունը մեր օրերի վրա:
7.1.2. Վերլուծի և համակարգի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները. քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական:
Արժեհամակարգ-մարտահրավերներ
7.1.3. Ուումնասիրի հին քաղաքկարությունները և դրանց կողմից ժամանակի մարտահրավերները հաղթահարելու գործընթացները, ձևավորի բանիմաց արժեհամակարգ մարտահրավերներ արժեհամակարգի վերաբերյալ դիտարկելով այն որպես հասարկության զարգացման կարևոր բաղադրիչ:
Հմտություն հետազոտական հմտություն
7.1.4. Ուսումնասիրի հնագույն քաղաքակրթություններին վերաբերվող զանազան աղբյուրները՝ ձևավորի հետազոտական հմտություն:
Գործողություն
7.1.5 Ուսումնասիրելով իր համայնքը հավաքագրի և ամբողջացնի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները, որոնք հիմք են հանդիսացել իր համայնքի գործունեության համար:

**Թեմայի բովանդակությունը**

1. Հին եգիպտական քաղաքակրթություն:
2. Եգիպտական քաղաքակրթության ազդեցությունը:
3. Միջագետքյան քաղաքակրթություն:
4. Միջագետքյան քաղաքակրթության ազդեցությունը:
5. Հետադարձ կապ

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
| --- | --- |
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով:<br>• Դեպքի ուսումնասիրություն:<br>• 3D մոդելով միջավայրի ստեղծում: | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, ընդհանրությունները, առանձնահատկությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |

| Միջառարկայական կապերը թեմայում |
|---|
| **Աշխարհագրություն** - Քաղաքակրթությունների զարգացման աշխարհագրական միջավայրի ազդեցությունը:<br>**Լեզու, գրականություն** - Պատմական տեքստերի ընթերցում:<br>**Մաթեմատիկա** - Հաշվարկներ:<br>**Արվեստ** - Պատմության արտացոլանքը: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, |

| Թեմա 2 |
|---|
| ***Հին Հունաստան (10 ժամ)*** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի հին հունական քաղաքակրթության ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, նորարարությունները և դրանց ունեցած դերն ու ազդեցությունը ժամանակակից աշխարհի վրա: |
| **Հետազոտության հարցը** |
| Ո՞րն էր հունական քաղաքակրթության առանձնահատկությունը:<br>Ո՞րն է հունական քաղաքակրթության ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ:<br>Արդյոք հնարավո՞ր է պատկերացնել եվրոպական քաղաքակրթության զարգացումը առանց հունական քաղաքակրթության: |
| **Վերջնարդյունք** |
| **7.2.5** Կուսումնասիրի հունական քաղաքակրթության ձևավորման և զարգացման գործընթացները, այդ քաղաքակրթության այն ձեռքբերումները, որոնք ազդել են տարբեր քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման վրա:<br>**7.2.6** Համեմատելով և համադրելով հունական քաղաքակրթության տարբեր ձեռքբերումները՝ կձևավորի հնարամտության արժեհամակարգի վերաբերյալ իմացություն:<br>**7.2.7** Համագործակցելով կուսումնասիրի տարբեր պատմական աղբյուրներ:<br>**7.2.8** Կուսումնասիրի և կներկայացնի իր համայնքում գոյություն ունեցող այն գաղափարները և երևույթները, որոնք ձևավորվել են հունական քաղաքակրթությունում: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հունական քաղաքակրթության սկիզբը:<br>2. Նախապոլիսյան և արխաիկ դարաշրջանի Հունաստանը (Ք.ծ.ա. VIII-VI դարեր): |

| |
|---|
| 3. Դասական դարաշրջանի Հունաստանի հասարակական և մշակութային կյանքը, հունական պոլիս:<br>4. Հունական քաղաքակրթության ազդեցությունը:<br>5. Ալեքսանդր Մակեդոնացի. համաշխարհայնացման փորձերը:<br>6. Հելլենիստական աշխարհ. մշակութային ժառանգություն:<br>7. Հետադարձ կապ: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով:<br>• Դեպքի ուսումնասիրություն. հունական պոլիս և արդի աշխարհ:<br>• Սահիկաշարի պատրաստում:<br>• Բանավեճ: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Աշխարհագրություն** - Քարտեզի ճանաչում:<br>**Հայոց լեզու և գրականություն** - Հունական առասպելները, տեքստերի ընթերցում:<br>**Արվեստ** - Հունական արվեստի առանձնահատկությունների ուսումնասիրում. նկարչություն, երաժշտություն, պար:<br>**Մաթեմատիկա** - Ձեռքբերումները, հաշվարկները, չափումները: |

| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
|---|
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| **Թեմա 3** |
|---|
| ***Հին Հռոմ (10 ժամ)*** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի հռոմեական քաղաքակրթության ձևավորումը, զարգացումը և անկումը, ինչպես նաև այն մարտահրավերները, որոնց բախվեց այս քաղաքակրթությունը: Համագործակցային նախագծային աշխատանքի միջոցով կհասկանա նաև նշված քաղաքակրթության դերը եվրոպական և արդի աշխարհի ձևավորման վրա: |

| Վերջնարդյունք |
|---|
| **7.3.4** Կուսումնասիրի Հին Հռոմեական քաղաքակրթության ձևավորումը, զարգացումը և անկումը, դրա ունեցած դերը եվրոպական քաղաքակրթության և արդի աշխարհի վրա:<br>**7.3.5** Համագործակցային հետազոտական, նախագծային աշխատանքների միջոցով կկարողանա ներկայացնել և քննարկել այն գործընթացները և գաղափարները, որոնք ձևավորեցին հռոմեական քաղաքակրթությունը, հանգեցրին դրա զարգացմանը և եվրոպական ու արդի աշխարհի վրա դրա դերի ազդեցությանը:<br>**7.3.6** Համագործակցային աշխատանքների շնորհիվ կմեկնաբանի այն մարտահրավերները, որոնց բախվում էր հռոմեական քաղաքակրթությունը, կտարբերակի այն մարտահրավերները, որոնք հաղթահարեց կամ չհաղթահարեց հռոմեական քաղաքակրթությունը:<br>**7.3.7** Համագործակցային նախագծային աշխատանքների միջոցով կուսումնասիրի իր համայնքը և կդասակարգի այն գաղափարները կամ երևույթները, որ ունեցել է հռոմեական քաղաքակրթությունն իր համայնքի վրա: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հռոմ քաղաք-պետության առաջացումը:<br>2. Վաղ հռոմեական պետության սոցիալական և քաղաքական կարգը:<br>3. Հռոմեական հանրապետություն:<br>4. Հռոմեական կայսրություն:<br>5. Կայսրության բաժանումն ու անկումը:<br>6. Հռոմեական կայսրության հասարակական և մշակութային կյանքը:<br>7. Հռոմեական քաղաքակրթության ազդեցությունը:<br>8. Հետադարձ կապ: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Հիմնախնդիրների հետազոտում<br>• Աշխատանք աղբյուրներով:<br>• Եռաչափ քարտեզի ստեղծում: | **Համակարգ (պետություն)**<br>Պետությունը՝ որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:<br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |

| Միջառարկայական կապերը թեմայում |
|---|
| **Աշխարհագրություն** - Քարտեզի կիրառում, աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունների ուսումնասիրում:<br>**Հասարակագիտություն** - Պետական համակարգ, գրված օրենքների համակարգի ստեղծում:<br>**Լեզու, գրականություն** - Տեքստերի ընթերցում և վերլուծություն:<br>**Մաթեմատիկա** - հաշվարկներ, խնդիրների կազմում:<br>**Արվեստ** - Հռոմեական արվեստի իմացություն: |

| Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ |
|---|
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| **Թեմա 4** |
|---|
| ***Քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում և Արևելքում (14 ժամ)*** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկություններն Արևմուտքում, Արևելքում և դրանց ունեցած ներդրումը արդի աշխարհի ձևավորման վրա: |
| **Վերջնարդյունք** |
| **7.4.5** Կուսումնասիրի Արևելքի և Արևմուտքի մի շարք քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման և կայացման ուղիները, այն պայմանները և գործընթացները, որոնք հանգեցրին բազմաբնույթ քաղաքակրթությունների ձևավորմանը:<br>**7.4.6** Կուսումնասիրի Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային բազմազանությունը՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք բազմազանության արժեհամակարգի վերաբերյալ:<br>**7.4.7** Բազմաթիվ աղբյուրագիտական տեղեկությունների վերլուծության հիման վրա կիրառելով ԾՆԱՍ (ծագում, նպատակ, արժեք, սահմանափակում) մոդելը՝ նախագծային աշխատանքների միջոցով կներկայացնի այդ հասարակությունների կացութաձևերը:<br>**7.4.8** Դաս-էքսկուրսիաների միջոցով կծանոթանա և կներկայացնի իր մտորումները, տպավորությունները արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների մշակույթի վերաբերյալ: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. «Ժողովուրդների մեծ գաղթը» և Արևմտահռոմեական կայսրության անկումը. նոր պետությունների առաջացումը:<br>2. Արևելահռոմեական կայսրությունը (Բյուզանդիա):<br>3. Արաբական արշավանքները և խալիֆայության առաջացում:<br>4. Հին ռուսական պետություն:<br>5. Խաչակրաց արշավանքները և դրանց հետևանքները:<br>6. Մոնղոլական արշավանքները և «եվրասիական» տերության ստեղծումը:<br>7. Հարյուրամյա պատերազմը:<br>8. Չինական քաղաքակրթությունը միջնադարում:<br>9. Հնդկաստանը միջնադարում:<br>10. Ճապոնիան միջնադարում:<br>11. «Ամերիկյան մինչկոլումբոսյան» քաղաքակրթությունները:<br>12. Աշխարհագրական մեծ հայտնագործությունները: |

| 13. Հետադարձ կապ: | |
|---|---|
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հիմնախնդիրների հետազոտում: | **Համակարգ (պետություն)**<br>*Պետություն, հասարակություն և տնտեսություն* հասկացությունների տարատեսակները միջնադարյան տարբեր քաղաքակրթություններում:<br>**Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների ու իրադարձությունների օրինաչափություններ: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Աշխարհագրություն** - Քաղաքական և ֆիզիկական քարտեզ:<br>**Հասարակագիտություն** - Քաղաքական համակարգեր:<br>**Գրականություն** - Տեքստերի ուսումնասիրում ու վերլուծում, մասնավորապես՝ արաբական և հնդկական մաթեմատիկական դպրոցների վերաբերյալ:<br>**Մաթեմատիկա** - Հաշվարկներ և խնդիրների կազմում:<br>**ՆԶՊ** - Բանակների կառուցվածքի, զենքի տեսակների ուսումնասիրում:<br>**Արվեստ** - Քաղաքակրթությունների տարբերությունների արտացոլումն արվեստում: | |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 | |

| Թեմա 5 |
|---|
| ***Միջնադարի ավարտը (12 ժամ)*** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի և կվերլուծի միջնադարյան հասարակությունների կերպափոխությունները և դրանց պատճառահետևանքային կապերը, կդիտարկի, թե ինչպես այդ հասարակությունները կիրառեցին որոշակի լուծումներ՝ հաղթահարելու ժամանակի մարտահրավերները: |
| **Վերջնարդյունք** |
| **7.5.4** Կվերլուծի այն գործոնները և պատճառահետևանքային կապերը, որոնք հանգեցնում են հասարակությունների փոփոխություններին:<br>**7.5.5** Կտարբերակի այն գործոնները և պատճառահետևանքային կապերը, որոնք նպաստում |

| | |
|---|---|
| են որոշ հասարակությունների կերպափոխմանը և արդիականացմանը կամ թուլացմանն ու կործանմանը:<br>**7.5.6** Ուսումնասիրելով տարբեր պատմական և մեդիա աղբյուրներ՝ կտարբերակի և կհամեմատի և կհակադրի պատմական օրինակները, երբ հասարակությունները կարողացել են հաղթահարել ժամանակի մարտահրավերները և տվել իրենց լուծումները:<br>**7.5.7** Կվերլուծի և կներկայացնի, թե միջնադարյան հասարակությունների որ մարտահրավերներին է իր համայնքն այժմ բախվում և ինչ լուծումներ է տալիս այդ մարտահրավերներին: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Փոփոխվող հասարակություններ:<br>2. Տնտեսական համակարգի փոփոխություններ:<br>3. Մշակութային փոփոխություններ: Վերածնունդ (Ռենեսանս):<br>4. Քաղաքական փոփոխություններ: Ռեֆորմացիա: Նիդերլանդական հեղափոխություն:<br>5. Ի՞նչն է նպաստում հասարակության փոփոխության:<br>6. Հետադարձ կապ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Հետազոտական աշխատանք:<br>• Համակարգերի մոդելավորում:<br>• Աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում: | **Համակարգ**<br>Տնտեսական համակարգերի և հասարակությունների փոխազդեցությունները:<br><br>**Գիտատեխնիկական նորարարություն**<br>Ինչպե՞ս ենք գնահատում այն աշխարհը, որտեղ ապրում ենք:<br>Սովորողներն ուսումնասիրում են բնությունը, դրա օրենքները, մարդկանց և բնության փոխազդեցությունը, գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը համայնքների և շրջակա միջավայրի վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդկային գործունեության վրա և հարմարեցումը մարդու կարիքներին: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Աշխարհագրություն** - Քարտեզի ուսումնասիրում ու կիրառում, աշխարհագրական միջավայրի ուսումնասիրում: | |

| |
|---|
| **Հասարակագիտություն** - Քաղաքական ու տնտեսական համակարգերի ուսումնասիրում և դրանց փոխազդեցության մեկնաբանում:<br>**Հայոց լեզու, գրականություն** - Տեքստերի ընթերցում ու վերլուծություն:<br>**Մաթեմատիկա** - Հաշվարկներ, խնդիրների կազմում:<br>**Արվեստ** - Արվեստի ճյուղերի առանձնահատկությունները: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46 |

**8-րդ դասարան (Առաջարկվող ժամաքանակ՝ 68 ժամ)**

1. Քաղաքակրթությունների մուտքը նոր ժամանակներ. գաղափարները փոխում են աշխարհը (14 ժամ)
2. Արդյունաբերական հասարակությունն առաջ է անցնում քաղաքակրթական մրցավազքում (14 ժամ)
3. Վերափոխումները հասարակությունների զարգացման միջոց 19-րդ դարում (18 ժամ)
4. Հասարակությունների զարգացման տեսլականը. համաշխարհային կրոններ և գաղափարախոսություններ (18 ժամ)

| **Թեմա 1** |
|---|
| ***Քաղաքակրթությունների մուտքը նոր ժամանակներ. գաղափարները փոխում են աշխարհը*** **(14 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի համաշխարհային պատմության նոր դարերի պատմական զարգացումը, հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները: |
| **Վերջնարդյունք** |
| 8.1.1 Կվերլուծի և կմեկնաբանի աշխարհագրական մեծ հայտնագործությունների, Վերածննդի, Ռեֆորմացիայի, գիտական հեղափոխության և լուսավորության գաղափարների ձևավորման և զարգացման նախադրյալները և դրանց հասարակությունների վերափոխման ուղիները:<br>8.1.2 Կներկայացնի այն գաղափարերը և գործընթացները, որոնք արդիականացրեցին հասարակությունները՝ ձևավորելով խոհեմ/բանական արժեհամակարգ այդ գաղափարների և գործընթացների վերաբերյալ:<br>8.1.3 Կքննարկի հասարակությունների վերափոխման վերոհիշյալ գործընթացները:<br>8.1.4 Կհետազոտի իր համայնքը և կգտնի ու կներկայացնի այն գաղափարները, որոնք գործում են համայանքում և գալիս են պատմական գործընթացներից: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Համաշխարհային քաղաքակրթությունների համեմատական վերլուծության նկարագիրը նոր դարերի շեմին:<br>2. Նոր գաղափարները փոխում են աշխարհը, գիտական հեղափոխություն:<br>3. Լուսավորության դարաշրջանը: |

| | |
|---|---|
| 4. Անգլիական հեղափոխություն:<br>5. ԱՄՆ պետության առաջացումը:<br>6. Ֆրանսիական հեղափոխությունը:<br>7. Հետադարձ կապ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հիմնախնդիրների հետազոտում:<br>• Սահիկաշարերի պատրաստում:<br>• Երևակայական ճանապարհորդություն տվյալ ժամանակաշրջանում:<br>• Բանավեճ: | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առօրեական կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Աշխարհագրություն** - Քարտեզ, աշխարհագրական միջավայրի ուսումնասիրում:<br>**Գրականություն** - Տեքստերի ընթերցում, վերլուծություն:<br>**ՆԶՊ** - Մարտավարության փոփոխություն, բանակի կառուցվածքի, զենքի ձևերի ուսումնասիրում:<br>**Արվեստ** - Փոփոխություններն ու մեկնաբանություններն արվեստում: | |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 | |

| |
|---|
| **Թեմա 2** |
| **Արդյունաբերական հասարակությունն առաջ է անցնում քաղաքակրթական մրցավազքում** (14 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի արդյունաբերական հասարակության ձևավորման, զարգացման գործընթացները և այդ հասարակությունների դերը աշխարհաքաղաքական գործընթացներում: |

**Վերջնարդյունք**

**8.2.5** Կհետազոտի արդյունաբերական և ավանդական հասարակությունների զարգացման ուղիները, գործընթացները, որոնք հանգեցրերին արդյունաբերական հասարակությունների զարգացմանը և առաջնորդությանը աշխարհաքաղաքական գործընթացներում:

**8.2.6** Կուսումնասիրի արդյունաբերական հասարակությունների զարգացման գործընթացները և ձեռքբերումները, կձևավորի ողջամիտ և հարգալից վերաբերմունք արդիականացում հասկացության վերաբերյալ:

**8.2.7** Ինքնուրույն և թիմային աշխատանքների միջոցով կուսումնասիրի տարբեր արդյունաբերական և ավանդական հասարակությունների զարգացման ուղիները, պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:

**8.2.8** Կներկայացնի որևէ աշխատանք այն երևույթների կամ գաղափարների մասին, որոնք առկա են իր համայնքում և ձևավորվել են կամ արդյունք են արդյունաբերական հասարակությունների:

**Թեմայի բովանդակություն**

***Արդյունաբերական հասարակության առաջին երկու շրջափուլերը (XVII-XX դարի առաջին կես).***

1. Արդյունաբերական հասարակության գաղափարախոսությունը:
2. Արմատական տեղաշարժեր տնտեսության մեջ, արդյունաբերական զարգացման արդյունքները:
3. Արդյունաբերական հասարակությունների զարգացումը, հասարակական կերպափոխումները:
4. Արդյունաբերական հասարակությունների զարգացման արևմտյան ուղին. Մեծ Բրիտանիա, Գերմանիա:
5. Արդյունաբերական հասարակությունների զարգացման ասիական ուղին . Ճապոնիա:
6. Արդյունաբերական հասարակությունները ձևափոխում են աշխարհը. ավանդական հասարակությունների ճգնաժամը:
7. Հետադարձ կապ:

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հիմնախնդիրների հետազոտում:<br>• Հետազոտական աշխատանք:<br>• Բանավեճ:<br>• Էսսե: | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական ու հասարակական երևույթների, իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա |

| | |
|---|---|
| | միջավայրի վրա: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հասարակագիտություն** - Գաղափարախոսությունների իմացություն:<br>**Գրականություն** - Տեքստերի հետազոտում:<br>**Արվեստ** - Նոր ճյուղերի ու նոր մոտեցումների հետազոտում: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| |
|---|
| **Թեմա 3** |
| ***Վերափոխումները հասարակությունների զարգացման միջոց 19-րդ դարում* (18 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի պետությունների հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, ինչպես նաև նոր դարերում տեղի ունեցած հակամարտությունները և հեղափոխական գործընթացները: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>8.3.1 Կհետազոտի նորդարյան հասարակությունների վերափոխումների ուղիները և գործընթացները, դրանց ազդեցությունը աշխարհաքաղաքական գործընթացների վրա:<br>• Արժեհամակարգ-բարեկեցություն<br>8.3.2 Կուսումնասիրի և կմեկնաբանի բարեկեցության այն գաղափարները, որոնք ձևավորվեցին և առաջնորդեցին նորդարյան հասարակություններին:<br>• Հմտություն. քննադատական մտածելակերպ<br>8.3.3 Թիմային և խմբային աշխատանքների միջոցով կքննարկի և կհիմնավորի նորդարյան հասարակությունների զարգացման տարբեր ուղիները:<br>• Գործողություն<br>8.3.4 Կուսումնասիրի և կհամեմատի իր համայնքի գործընթացները նորդարյան հասարակությունների գործընթացների հետ՝ վեր հանելով նմանությունները և տարբերությունները: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Նապոլեոնյան դարաշրջանը (1799-1815):<br>2. Հեղափոխությունները Եվրոպայում 1830-1840-ական թվականներին:<br>3. Եվրոպան 1820-1870–ական թվականներին (Վիեննայի ժողովից մինչև ազգային |

| | |
|---|---|
| պետությունների ստեղծում (Գերմանիա, Իտալիա):<br>4. Արևելքի ավանդական հասարակություններն ու արդիականացման փորձերը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին (Օսմանյան Թուրքիա, Իրան, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա):<br>5. Փոփոխություններ տնտեսության մեջ և սոցիալական կյանքում:<br>6. Քաղաքական ու սոցիալական կյանքի զարգացումը Եվրոպայում և ԱՄՆ-ում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին:<br>7. Հետադարձ կապ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում: | **Անհատներ և հարաբերություններ**<br>Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Հայոց պատմություն** - Գաղափարական փոփոխություններ, ազատագրական պայքար:<br>**Աշխարհագրություն** - Միջավայրի ուսումնասիրում, քարտեզ:<br>**Հասարակագիտություն** - Քաղաքական, տնտեսական և գաղափարական համակարգեր:<br>**Գրականություն** - Համապատասխան տեքստերի մեկնաբանություն:<br>**Արվեստ** - Ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ: | |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46 | |

| |
|---|
| **Թեմա 4** |
| **Հասարակությունների զարգացման տեսլականը. համաշխարհային կրոններ և գաղափարախոսություններ (18 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը հետազոտական և վերլուծական աշխատանքների միջոցով կուսումնասիրի հասարակությունների զարգացման այն տեսլականը՝ գաղափարախոսությունները, որոնք ձևավորվեցին նոր դարերում և առաջնորդեցին որոշ հասարակությունների զարգացումը: |

<table>
<tr><th colspan="2">Վերջնարդյունք</th></tr>
<tr><td colspan="2">• Գիտելիք<br>8.4.1 Կուսումնասիրի և կվերլուծի հասարակությունների զարգացման այն տեսլականները, որոնք ձևավորվեցին նոր ժամանակներում և ուղղորդեցին որոշ հասարակությունների հետագա զարգացումը:<br>• Արժեհամակարգ -բարեկեցություն<br>8.4.2 Վերլուծական քննական աշխատանքների միջոցով կուսումնասիրի, կքննարկի բարեկեցություն հասկացությունը և յուրաքանչյուր հասարակության՝ դրան հասնելու գաղափարական հենքը:<br>• Հմտություն-քննական մտածողության զարգացում<br>8.4.3 Կուսումնասիրի տարբեր գաղափարախոսությունների տեսությունները և կիրառման ուղիները, կքննարկի դրանք և կբացատրի յուրաքանչյուր հասարակության որևէ գաղափարախոսության ընտրությունը:<br>• Գործողություն<br>8.4.4 Կուսումնասիրի, կհիմնավորի, թե իր հասարակությունում որ գաղափարախոսությունները կամ դրանց բաղադրիչներն են գործում և ինչպես՝ պատրաստելով հինգ հիմնավորումից և օրինակներից բաղկացած զեկույց:</td></tr>
<tr><th colspan="2">Թեմայի բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">Համաշխարհային կրոններ<br>1. Բուդդայականություն<br>2. Քրիստոնեություն<br>3. Իսլամ<br>Գաղափարախոսություններ<br>1. Սոցիալիզմ:<br>2. Մարքսիզմ:<br>3. Կոմունիզմ:<br>4. Պահպանողականություն:<br>5. Լիբերալիզմ:<br>6. Անարխիզմ:<br>7. Սոցիալ-դարվինիզմ:<br>8. Շովինիզմ և ազգայնամոլություն:<br>9. Հետադարձ կապ:</td></tr>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Ընդհանրական խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>• Նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում:<br>• Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված</td><td>Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում<br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները</td></tr>
</table>

| | |
|---|---|
| տեղեկատվության վերլուծություն:<br>• Ֆիլմերի դիտում և քննարկում: | մարդկության և շրջակա միջավայրի վրա: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Գրականություն** - Համապատասխան տեքստերի ընթերցում և մեկնաբանություն:<br>**Արվեստ** - Կերպարվեստ, երաժշտություն: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

**9-րդ դասարան (Առաջարկվող ժամաքանակ՝ 68 ժամ)**

1. Նորարարությունը հանգեցրեց աշխարհի անհամաչափ զարգացմանը (14 ժամ)
2. Նոր աշխարհաքաղաքական կարգի հաստատումը (14 ժամ)
3. Աշխարհը Երկրորդ աշխարհամարտի և Սառը պատերազմի ժամանակաշրջանում (14 ժամ)
4. Աշխարհը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին (14 ժամ)
5. Գիտատեխնիկական հեղափոխությունը և աշխարհը (10 ժամ)

| |
|---|
| **Թեմա 1** |
| **Նորարարությունը հանգեցրեց աշխարհի անհամաչափ զարգացմանը (14 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի և ձևավորելով վերլուծական ու քննական մտածողություն՝ կվերլուծի պատմական այն գործընթացները, որոնք տեղի ունեցան XIX դարի երկրորդ կեսին ու XX դարի սկզբին և հանգեցրին աշխարհի վերաձևմանն ու վերափոխմանը: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>9.1.1 Կհետազոտի XIX-XX դարերի առանցքային, պատմական հասարակական-քաղաքական գործընթացները, որոնք հանգեցրին աշխարհի վերափոխմանը և վերաձևավորմանը:<br>• Արժեհամակարգ-նորարարություն<br>9.1.2 Կհետազոտի և կվերլուծի այն հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային նորարարությունները, որոնք հանգեցրին որոշ հասարակությունների աննախադեպ առաջընթացին և այնուհետև ռազմական բախումների:<br>• Հմտություն-վերլուծական քննական մտածողություն<br>9.1.3 Ծանոթանալով տարբեր պատմական աղբյուրների տեղեկություններին՝ կվերլուծի և կքննարկի պատմական այն գործընթացները, որոնք հանգեցրին աշխարհի վերաձևմանը և վերափոխմանը:<br>• Գործողություն<br>9.1.4 Կուսումնասիրի սեփական համայնքը և կվերլուծի ու կներկայացնի այն գործընթացները, |

| |
|---|
| որոնք տեղի են ունեցել ուսումնասիրվող թեմայի ժամանակ և ազդել են իր համայնքի ձևավորման վրա: |
| **Թեմայի բովանդակություն** |
| ***Զարգացած արդյունաբերական երկրները (XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ).***<br>1. Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլը. փոփոխություններ տնտեսության մեջ և սոցիալական կյանքում:<br>2. Միջազգային հարաբերությունները (XIX դար - XX դարի սկիզբ):<br>3. Ազգային հիմնախնդիրը բազմազգ տերություններում:<br>4. Առաջին աշխարհամարտը:<br>5. 1917 թ. Ռուսական հեղափոխությունները:<br>6. Հետադարձ կապ: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
|---|---|
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հետազոտական աշխատանք:<br>• Էսսե: | **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Աշխարհագրություն** - Քարտեզի գործածում:<br>**Գրականություն** - Համապատասխան տեքստերի ընթերցում ու վերլուծություն:<br>**ՆԶՊ** - Բանակի ու զենքի տեսակների ուսումնասիրում:<br>**Արվեստ** - Փոփոխությունների արտացոլումն արվեստում (կերպարվեստ, երաժշտություն): |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 |

| Թեմա 2 | |
|---|---|
| *Նոր աշխարհաքաղաքական կարգի հաստատումը (14 ժամ)* | |
| **Նպատակ** | |
| Աշակերտը կուսումնասիրի արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլում տեղի ունեցած հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացները, դրանցում կարևոր դերակատարում ունեցող անհատներին: | |
| **Վերջնարդյունք** | |
| • Գիտելիք<br>9.2.1 Կհետազոտի և կվերլուծի Առաջին աշխարհամարտից հետո ընթացող աշխարհաքաղաքական գործընթացները, Երկրորդ աշխարհամարտը և դրա ավարտը:<br>• Արժեհամակարգ-խաղաղություն<br>9.2.2 Կուսումնասիրի Ազգերի լիգայի գործունեությունը և այն գործընթացները, որոնք հանգեցրին խաղաղության խախտմանը Առաջին աշխարհարմարտից հետո, և խաղաղության վերահաստատման նոր գործընթացները և որոշումները:<br>• Հմտություն- համագործակցային հմտություն<br>9.2.3 Թիմային աշխատանքների միջոցով կուսումնասիրի պատմական աղբյուրներ, կվերլուծի և կքննարկի տարբեր պատմական տեսակետներ՝ հասկանալու համար տվյալ ժամանակաշրջանի գործընթացները:<br>• Գործողություն<br>9.2.4 Կուսումնասիրի սեփական ընտանիքի և համայնքի պատմությունը, վեր կհանի այն անձանց պատմությունը, որոնք ականատես են եղել այդ ժամանակաշրջանի պատմությանը, գրի կառնի ու դասարանին կներկայացնի առնվազն երկու ժամանակակցի պատմություն ու վերհուշը: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Նոր աշխարհակարգի ձևավորումը. Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը:<br>2. Ազգերի լիգան:<br>3. Տնտեսական մեծ ճգնաժամը:<br>4. Ամբողջատիրական վարչակարգերը 1920-30-ական թթ.. ֆաշիզմ, նացիզմ, բոլշևիզմ:<br>5. Արևելքի ավանդական հասարակությունները 1920-1930-ական թթ.:<br>6. Միջազգային հարաբերությունները 1920-1930-ական թվականներին:<br>7. Հետադարձ կապ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Քարտեզի ուսումնասիրություն:<br>• Պատմական տարբեր աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Սահիկաշարերի ներկայացում:<br>• Բանավեճ:<br>• Դերախաղ: | **Համակարգ**<br>Պետությունը՝ որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:<br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Հասարակությունների և համակարգերի, |

| | |
|---|---|
| | համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:<br>**Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Աշխարհագրություն** - Քաղաքական քարտեզի ուսումնասիրում:<br>**Գրականություն** -Համապատասխան տեքստի ուսումնասիրում և մեկնաբանում:<br>**ՆԶՊ** - Բանակի կառուցվածքի և զենքի տեսակների ուսումնասիրում:<br>**Արվեստ - Կ**ոնֆլիկտի պատկերումն արվեստում (երաժշտություն, կերպարվեստ և այլն): | |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** | |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46 | |

| |
|---|
| **Թեմա 3** |
| **Աշխարհը Երկրորդ աշխարհամարտի և Սառը պատերազմի ժամանակաշրջանում (14 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի Սառը պատերազմի ընթացքում տեղի ունեցած հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները ինչպես նաև դրանցում կարևոր դերակատարում ունեցած անհատներին: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>9.3.1 Կհետազոտի Սառը պատերազմը, հասարակական-քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական ու մշակութային գործընթացները և դրանց ազդեցությունը արդի աշխարհի ձևավորման վրա:<br>• Արժեհամակարգ-նորարարություն<br>9.3.2 Կուսումնասիրի այն նորարարական գաղափարները (տնտեսական, ռազմական, սոցիալական ևն), որոնք ձևավորվեցին և առաջնորդեցին Սառը պատերազմի դարաշրջանում:<br>• Հմտություն-քննական հմտություն<br>9.3.3 Կուսումնասիրի և կքննարկի տարբեր պատմական աղբյուրներ՝ զարգացնելով քննական մտածողություն:<br>• Գործողություն<br>9.3.4 Կուսումնասիրի իր համայնքը և ներկայացնի այն գործընթացները, որոնք ձևավորվել են Սառը պատերազմի տարիներին և ազդեցություն են ունեցել համայնքի վրա (և՛ դրական, և՛ |

| |
|---|
| բացասական): |

| Թեմայի բովանդակություն |
|---|
| 1. Երկրորդ աշխարհամարտ<br>2. Սառը պատերազմ<br>3. Երկբևեռ աշխարհ. ԱՄՆ և ԽՍՀՄ<br>4. «Երրորդ աշխարհի» երկրները<br>5. Հետադարձ կապ |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող հասկացություններ |
|---|---|
| • Նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում:<br>• Բանավեճ:<br>• Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Ֆիլմերի դիտում և քննարկում: | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:<br>**Գիտատեխնիկական նորարարություն**<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների, քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարակական զարգացման և առաջընթացի վրա: |

| Միջառարկայական կապերը թեմայում |
|---|
| **Աշխարհագրություն** - Քաղաքական քարտեզի փոփոխություն:<br>**Հասարակագիտություն** - Համակարգերի, կոնֆլիկտների, գաղափարախոսության ուսումնասիրություն:<br>**Գրականություն** - Համապատասխան տեքստերի ընթերցում և մեկնաբանում:<br>**ՆԶՊ** - Զենքի ու բանակի կառուցվածքի իմացություն:<br>**Արվեստ** - Կոնֆլիկտի արտացոլումը արվեստում: |

| Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ |
|---|
| Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46 |

| Թեմա 4 |
|---|
| **Աշխարհը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին (14 ժամ)** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում տեղի ունեցած հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները, ինչպես նաև |

| | |
|---|---|
| դրանցում կարևոր դերակատարում ունեցած անհատներին: | |
| **Վերջնարդյունք** | |
| • Գիտելիք. <br>9.4.1 Կվերլուծի և կքննարկի Սառը պատերազմից հետո աշխարհի հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացները: <br>• Արժեհամակարգ-առաջնորդություն <br>9.4.2 Կուսումնասիրի և կվերլուծի հետսառըպատերազմյան գործընթացները, որոնք ընթանում էին երկրների և դաշինքների առաջնորդության համար: <br>• Հմտություն-խնդրահարույց իրավիճակների լուծում <br>9.4.3 Կուսումնաիրի, թե ինչպես և ինչ լուծումնր էին գտնում երկրները և կառույցները ժամանակի մարտահրավերները հաղթահարելու համար (գիտության զարգացում, դաշինքների ստեղծում և այլն): <br>• Վերաբերմունք-առաջնորդի հատկանիշ <br>9.4.4 Աշակերտը ձեռք կբերի առաջնորդի հատկանիշներ, որը կարողանում է պատմաքաղաքական տարբեր անցուդարձերի նետած մարտահրավերները ճիշտ վերլուծել և գտնել լուծումներ: <br>• Գործողություն <br>9.4.5 Կուսումնասիրի և բանավոր կամ գրավոր կներկայացնի ու կվերլուծի իր համայնքի այն գաղափարներն ու կառույցները, որոնք ստեղծվել են հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Արևմուտքի երկրները հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում: <br>2. ԽՍՀՄ փլուզումը: Հետխորհրդային երկրները: <br>3. Փոփոխություններ միջազգային հարաբերություններում: <br>4. Արդի աշխարհի հիմնախնդիրները: <br>5. Հետադարձ կապ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Սահիկաշարերի ներկայացում: <br>• Զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն: <br>• Հիմնախնդիրների հետազոտում: <br>• Հետազոտական աշխատանք: | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** <br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: <br>**Գիտատեխնիկական նորարարություն** <br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների, քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարակական զարգացման և առաջընթացի վրա: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |

| |
|---|
| **Աշխարհագրություն** - Քաղաքական քարտեզ:<br>**Հասարակագիտություն** - Քաղաքական, տնտեսական, կրոնական համակարգեր:<br>**Գրականություն** - Համապատասխան տեքստի ընթերցում ու մեկնաբանում:<br>**Արվեստ** - Կյանքի արտացոլումն արվեստում (կերպարվեստ, երաժշտություն): |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 23, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46 |

| | |
|---|---|
| **Թեմա 5** | |
| **Գիտատեխնիկական հեղափոխությունը և աշխարհը (10 ժամ)** | |
| **Նպատակ** | |
| Աշակերտը կուսումնասիրի հետարդյունաբերական ժամանակաշրջանի գիտատեխնիկական նվաճումները և դրանց դերը հասարակական-քաղաքական զարգացման վրա: | |
| **Վերջնարդյունք** | |
| • Գիտելիք<br>9.5.1 Կուսումնասիրի հետարդյունաբերական շրջանի գիտատեխնիկական նվաճումները և դրանց ազդեցությունները նորագույն շրջանի հասարակական-քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումների վրա:<br>• Արժեհամակարգ-արդիականություն<br>9.5.2 Կհետազոտի գիտատեխնիկական նվաճումների դերը հասարակությունների արդիականացման գործում:<br>• Հմտություն-համագործակցում<br>9.5.3 Գիտատեխնիկական նվաճումների հետազոտությունները կիրականացնի համագործակցելով ՝զարգացնելով համագործակցային հմտությունը:<br>• Վերաբերմունք-համագործակցող<br>9.5.4 Կձևավորվի համագործակցային վերաբերմունք հասարակության առջև ծառացած գիտատեխնիկական մարտահրավերները հաղթահարելու գործում:<br>• Գործունեություն<br>9.5.5 Կուսումնասիրի իր համայնքը և կվերլուծի գիտատեխնիկական այն նվաճումները, որոնք առկա են իր առօրյա կյանքում: | |
| **Թեմայի բովանդակություն** | |
| 1. Նորագույն շրջանի քաղաքակրթական ձեռքբերումները:<br>2. Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում:<br>3. Հետադարձ կապ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող հասկացություններ** |
| • Զրույցների ու հարցազրույցների | **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և** |

<table>
<tr><td>վարում անհատների և տարբեր խմբերի հետ (նաև առցանց տարբերակով):<br>• Զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն:</td><td>կայուն զարգացում<br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:<br>Գիտատեխնիկական նորարարություն<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների, քաղաքակրթական ճեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարակական զարգացման և առաջընթացի վրա:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապերը թեմայում</td></tr>
<tr><td colspan="2">Հասարակագիտություն -Համակարգերի ուսումնասիրում:<br>Գրականություն - Համապատասխան տեքստերի ընթերցում:<br>Մաթեմատիկա - Հաշվարկների հիման վրա խնդիրների կազմում:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 23, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33</td></tr>
</table>

**Ավագ դպրոց**
**Առաջարկվող ժամաքանակներն ըստ դասարանների**

| | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|
| Ժամաքանակ | **68** | **68** | **68** |
| Նախագծային աշխատանք և կրկնություն | **8** | **8** | **20** |
| Դաս-էքսկուրսիա | **8** | **8** | **8** |
| Պահուստային ժամ | **6** | **8** | **8** |

**Համաշխարհային պատմություն**
**10-րդ դասարան (Առաջարկվող ժամաքանակ՝ 68 ժամ)**

1. Պատմությունն ու ես (6 ժամ)
2. Հին Արևելքի քաղաքակրթությունները (8 ժամ)
3. Անտիկ քաղաքակրթությունները (8 ժամ)
4. Հին աշխարհի մայրամուտը և նորի սկզբնավորումը (8 ժամ)
5. Զարգացած և ուշ միջնադար (8 ժամ)
6. Նոր Եվրոպայի ծնունդը (8 ժամ)
7. Համաշխարհային մշակույթը նոր ժամանակներում (8 ժամ)

Հասարակություն

**Թեմա 1**

Պատմությունն ու ես (6 ժամ)

**Նպատակ**

Աշակերտը կհետազոտի և կվերլուծի *հասարակություն* հասկացությունը պատմության տարբեր շրջափուլերում, համաշխարհային պատմության փուլաբաժանումները, համաշխարհային պատմական գործընթացների բազմազանությունը և միասնականությունը, *քաղաքակրթություն* եզրույթը, քաղաքակրթության տիպերը, համակեցության և սոցիալ-քաղաքական կյանքը, հոգևոր կյանքը, պետությունների առաջացումը, պատմության ուսումնասիրման աղբյուրները, քաղաքակրթությունների ձեռքբերումներն ու բացթողումները, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

**Վերջնարդյունք**

- Գիտելիք

10.1.1 Կդասակարգի պատմական իրադարձությունները՝ ըստ պատմական փուլերի, պատմագիտական դպրոցների և հասարակական-քաղաքական բնագավառների: Համատեքստում կկիրառի և կմեկնաբանի պատմական եզրույթները և գործընթացները:

- Արժեհամակարգ- հետաքրքրություն

10.1.2 Կձևավորի հետաքրքրություն անցած պատմական գործընթացների և արդի գործընթացների նկատմամբ:

- Հմտություն-պատմական աղբյուրների ընթերցման քննական, վերլուծական հմտություն

10.1.3 Կսովորի պատմական աղբյուրների ուսումնասիրման և վերլուծման (ծագում, նպատակ, արժեք, սահմանափակում-ԾՆԱՍ) մոդելը՝ ձևավորելով պատմական աղբյուրների վերլուծման քննական վերլուծական մոտեցում:

**Թեմայի բովանդակություն**

1. Ներածություն:
2. Պատմության պարբերացումը, ուսումնասիրման աղբյուրները:
3. Համաշխարհային պատմական գործընթացի բազմազանությունը և միասնականությունը: Քաղաքակրթություն. տիպերը, համակեցութային և սոցիալ-քաղաքական կյանքը, հոգևոր կյանքը:
4. Պետությունների առաջացումը:
5. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող գաղափարներ** |
|---|---|
| • Աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հիմնախնդիրների հետազոտում | • **Օրինաչափություն**<br>Պատճառները, հետևանքները, |

| | |
|---|---|
| (անհատական կամ խմբային):<br>• Սահիկաշարերի պատրաստում: | առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:<br>• **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հայոց պատմություն** - Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումները և Հին Արևելքի երկրները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Լեզու և գիր, լեզվաընտանիք և ժողովուրդներ, գրային համակարգեր, գրանյութ, հնդեվրոպացիներ. տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ24, Մ25, Մ26, Մ29, Մ32, Մ33, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ41, Մ42:** |

| |
|---|
| **Թեմա 2** |
| ***<u>Հին Արևելքի քաղաքակրթությունները</u>*** (8 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կհետազոտի և կվերլուծի հինարևելյան հասարակությունների ձևավորման, զարգացման գործընթացները և դրանց ազդեցությունը համաշխարհային պատմական գործընթացներում: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>10.2.1 Կհետազոտի հին արևելյան հասարակությունների ձևավորման և զարգացման գործընթացները, կհամեմատի և կհամադրի այդ հասարակությունները, կարժևորի դրանց ազդեցությունը համաշխարհային պատմական արդի գործընթացների վրա:<br>• Արժեհամակարգ- համակարգվածություն |

| |
|---|
| 10.2.2 Կհետազոտի այն համակարգերը, որոնք ձևավորվեցին հին արևելյան հասարակություններում: Կձևավորի համակողմանի գիտելիք *համակարգ* հասկացության վերաբերյալ:<br>• Հմտություն-ստեղծագործություն<br>10.2.3 Կհետազոտի հին արևելյան հասարակությունների վերաբերյալ զանազան պատմական աղբյուրներ ՝ձևավորելով ստեղծագործական հմտություն:<br>• Գործունեություն<br>10.2.4 Կուսումնասիրի իր համայնքը՝ փաստերով հիմնավորելով այն երևույթները, որոնք առկա են իր համայնքում և առնչություններ ունեն հին արևելյան հասարակությունների համակարգի հետ: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Հին Եգիպտական քաղաքակրթությունը: Քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները:<br>2. Հին Միջագետքի քաղաքակրթությունը (Ք.ծ.ա. IV հազարամյակ - Ք.ծ.ա. 539 թ.), քաղաքակրթական ձեռքբերումները, և արդի հիմնախնդիրները:<br>3. Իրանական բարձրավանդակի պետությունները: Աքեմենյան աշխարհակալ տերությունը:<br>4. Փոքր Ասիայի, Արևելամիջերկրածովյան երկրների և Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունները, քաղաքակրթական ձեռքբերումները:<br>5. Հին Չինաստանի քաղաքակրթությունը, քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները:<br>6. Հին Հնդկաստանի քաղաքակրթությունը, քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները:<br>7. Հետադարձ կապ: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող գաղափարներ** |
|---|---|
| • Ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում:<br>• Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում:<br>• Աշխատանք ուսումնաօժանդակ նյութերով:<br>• Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում:<br>• Ֆիլմերի դիտում և քննարկում: | • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ**<br>Պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br>• **ԱԱնհատական և մշակութային արտահայտում**<br>Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու |

| | |
|---|---|
| | անհրաժեշտությունը: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հայոց պատմություն** - Հայկական լեռնաշխարհը հնագույն ժամանակներում, Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները և Հին Արևելքի երկրները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Լեզու և գիր, լեզվաընտանիք և ժողովուրդներ, գրային համակարգեր, գրանյութ, հնդեվրոպացիներ. տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Աշխարհի առաջին էպոսը, առասպելներ:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - եգիպտական բուրգեր, Բաբելոնի այգիներ, Բաբելոնի աշտարակ, չինական մեծ պարիսպ, օրհներգեր:<br>Միջառարկայական կապերի ստեղծումը կնպաստի թեմայի ամբողջական և համակարգված ընկալմանն ու յուրացմանը: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ1, Մ7, Մ11, Մ14, Մ16, Մ24, Մ25, Մ26, Մ29, Մ32, Մ33, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ41, Մ42:** |

| |
|---|
| **Թեմա 3** |
| ***Անտիկ քաղաքակրթությունները*** (8 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կհետազոտի և կվերլուծի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման ու անկման օրինաչափությունները և առանձնահատկությունները, Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ու ներկայիս աշխարհի առնչությունները, Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ականավոր գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>10.3.1 Կմեկնաբանի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ձևավորման ու զարգացման նախադրյալները, ընթացքը, կվերլուծի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, արդի աշխարհում նրանց թողած ազդեցությունները:<br>Կհամեմատի ու կհամադրի Հին արևելյան անհետացած և գոյատևող քաղաքակրթությունները Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների հետ, ինչպես նաև Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունները միմյանց հետ, |

կբացահայտի օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

- Արժեհամակարգ-հնարամտություն

10.3.2 Կհետազոտի անտիկ քաղաքակրթությունների հնարամիտ ձեռքբերումները, որոնք նպաստում էին այդ հասարակությունների արագ զարգացմանը:

- Հմտություն-հետազոտություն

10.3.3 Հետազոտելով զանազան պատմական մեդիա աղբյուրներ՝ կձևավորի հետազոտական հմտություններ:

- Գործողություն

10.3.4 Ուսումնասիրելով իր համայնքը՝ կմեկնաբանի անտիկ հասարակությունների թողած ազդեցությունն այդ համայնքի վրա:

**Թեմայի բովանդակություն**

1. Քաղաք-պետությունների հասարակությունները և ժողովրդավարության դրսևորումները Հին Հունաստանում:
2. Հույն փիլիսոփաների գաղափարները՝ հասարակության զարգացման միջոց:
3. Պելոպոնեսյան պատերազմները. քաղաքակրթական ճգնաժամը Հին Հունաստանում:
4. Հելլենիստական մշակույթի ազդեցությունը արևելյան հասարակությունների վրա:
5. Հռոմեական հասարակության զարգացման փուլերը. «Հռոմեական աշխարհ»-ի գաղափարը:
6. Քրիստոնեության տարածումը Հռոմում. հասարակության կերպափոխումը:
7. Հունահռոմեական քաղաքակրթության ազդեցությունը. միջնադարից մինչև մեր օրեր:
8. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող գաղափարներ** |
|---|---|
| • Համեմատություն հունական և հռոմեական հասարակությունների և մշակույթների միջև:<br>• Համեմատություններ հունական և հռոմեական ռազմարվեստի միջև:<br>• Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հիմնախնդիրների հետազոտում:<br>• Սահիկաշարերի պատրաստում:<br>• Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում: | **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը: Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Հայոց պատմություն** - Հայկական լեռնաշխարհը հնագույն և հին ժամանակներում, տվյալ

| |
|---|
| ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների, հավատալիքների ու դիցարանի իմացություն, համեմատություն, Հայաստանը և Հին հունական ու հռոմեական քաղաքակրթությունները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** -Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Հոմերոսի պոեմները, հին հռոմեական գրականությունը, անտիկ պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Հին աշխարհի հրաշալիքներ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ11, Մ14, Մ16, Մ24, Մ25, Մ26, Մ29, Մ32, Մ33, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ42:** |

| |
|---|
| **Թեմա 4** |
| ***Հին աշխարհի մայրամուտը և նորի սկզբնավորումը*** (8 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կհետազոտի և կվերլուծի հին աշխարհի մայրամուտի պատճառները, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, համաշխարհայնացման դրևորումներն ու ներկայիս աշխարհի հետ բազմատեսակ կապերը: |
| **Վերջնարդյունք** |
| **10.4.10** Կմեկնաբանի համաշխարհայնացման դրսևորման ձևավորման ու զարգացման նախադրյալները, ընթացքը:<br>**10.4.11** Կհամեմատի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունները հելլենիզմի հետ, կբացահայտի օրինաչափություններն ու առանձնահատկությունները:<br>**10.4.12** Վեր կհանի և կպարզաբանի հելլենիստական ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը, կարժևորի հելլենիստական դարաշրջանի ձեռքբերումներն ու բացթողումները, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:<br>**10.4.13** Կգնահատի հելլենիստական դարաշրջանի քաղաքակրթական ձեռքբերումները համաշխարհային մշակույթի համատեքստում, կգիտակցի մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:<br>**10.4.14** Կճանաչի հելլենիստական ժամանակաշրջանիականավոր գործիչներին, կբնութագրի և կհամեմատի նրանց, կգնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:<br>**10.4.15** Կվերլուծի և կգնահատի հելլենիստական ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր երևույթները, փաստերը և իրադարձությունները, կկանխատեսի ու կպատճառաբանի պատմական կամ հասարակական կարևոր իրադարձությունների և |

երևույթների արդյունքներն ու հետևանքները:

**10.4.16** Կապեր կգտնի ժամանակակից պատմական գործընթացներում առկա պատմական կամ հասարակական կարևոր իրադարձությունների կամ երևույթների միջև, կհամեմատի դրանք, կգտնի իր և սերունդների կապը պատմության մեջ:

**10.4.17** Քննական մոտեցմամբ կհավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, կվերլուծի դրանք և կփաստարկի դրանցում զետեղված տեղեկույթի արժանահավատությունը, աղբյուրագիտական հենքով իրականացված քննական վերլուծությամբ կհիմնավորի սեփական դիրքորոշումներն ու տեսակետները, աղբյուրներն օգտագործելիս կկատարի հղումներ:

**10.4.18** Տարբեր ժամանակաշրջաններում պատմության ու հասարակական հիմնահարցերի և առանցքային խնդիրների վերաբերյալ, իր ապրումների, շրջապատող աշխարհի, մարդկանց ու իրեն հուզող, հետաքրքրող պատմական ու հասարական երևույթների, իրադարձությունների վերաբերյալ կկատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, խնդիրներ կառաջադրի և լուծումներ ներկայացնի:

**Թեմայի բովանդակություն**

1. Նոր պետությունների առաջացումը Արևմտահռոմեական կայսրության տարածքում: Հասարակության վերափոխումը:
2. Կաթոլիկ եկեղեցին և քրիստոնեական հասարակության ձևավորումը Արևմտյան Եվրոպայում:
3. Բյուզանդական «ուղղափառ» հասարակության ձևավորումը:
4. Հոգևոր-մշակութային կապի խզումը Բյուզանդիայի և կաթոլիկ Եվրոպայի միջև:
5. Սասանյան Իրանը որպես արևելք-արևմուտք հակադրության մեջ:
6. Իսլամի ծագումը: Արաբա-մուսուլմանական աշխարհի ձևավորումը, մուսուլմանական Իսպանիա:
7. Չինական հասարակության արժեհամակարգի ձևավորումը միջնադարում:
8. Հնդկաստանի հասարակությունը միջնադարում. կրոնադավանաբանական ազդեցությունները:
9. Հետադարձ կապ:

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող գաղափարներ** |
|---|---|
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հիմնախնդիրների հետազոտում (անհատական կամ խմբային):<br>• Սահիկաշարերի պատրաստում:<br>• Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում:<br>• Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում և քննարկում: | • **Գիտատեխնիկական նորարարություն**<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների, քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարակական զարգացման և առաջընթացի վրա:<br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը: |

| Միջառարկայական կապերը թեմայում |
| --- |
| **Հայոց պատմություն** - Հայաստանը հելլենիզմի դարաշրջանում, տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների, դիցարանի իմացություն, համեմատություն: Հայաստանը և հելլենիստական աշխարհը:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** -Հելլենիստական դարաշրջանի գրականությունը, պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** -Հին աշխարհի հրաշալիքներ, հելլենիզմի դարաշրջանի արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ11, Մ14, Մ16, Մ24, Մ25, Մ26, Մ29, Մ32, Մ33, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ41, Մ42:** |

| Թեմա 5 |
| --- |
| ***Զարգացած և ուշ միջնադար*** (8 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կհետազոտի և կվերլուծի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, միջնադարյան քաղաքակրթությունների և ներկայիս աշխարհի առնչությունները, միջնադարյան քաղաքակրթությունների ականավոր գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>10.5.1 Կհետազոտի միջնադարյան տարբեր քաղաքակրթությունները՝ համեմատելով և համադրելով դրանց ձևավորման, զարգացման առանձնահատկությունները և ազդեցությունը արդի աշխարհի ձևավորման վրա:<br>• Արժեհամակարգ-ձեռքբերում<br>10.5.2 Կհետազոտի միջնադարյան քաղաքակրթությունները, կձևավորի գիտակից արժեհամակարգ միջնադարյան քաղաքակրթությունների ձեռքբերումների վերաբերյալ:<br>• Հմտություն-քննական մտածողություն<br>10.5.3 Կվերլուծի և կքննարկի զանազան պատմական աղբյուրներ, կզարգացնի քննական մտածողությունը:<br>• Գործողություն<br>10.5.4 Կուսումնասիրի իր համայնքը, կհամեմատի, կհակադրի և կմեկնաբանի արդի և միջնադարյան հասարակությունների սոցիալական, քաղաքական, տնտեսական և |

| |
|---|
| մշակութային կյանքը: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Մոնղոլ-թաթարական արշավանքները. քոչվորական հասարակությունից անցում դեպի «եվրասիական տերության»:<br>2. Հարյուրամյա պատերազմը և դրա ազդեցությունը արևմտաեվրոպական հասարակությունների և պետությունների վրա:<br>3. Ռուսական պետության և հասարակության կայացումը 14-16-րդ դարերում: Մոսկովյան Ռուսիա:<br>4. Թյուրք-մուսուլմանական զավթողական քաղաքականությունը և արևելաքրիստոնեական հասարակությունների ճգնաժամը: Օսմանյան տերություն:<br>5. «Մինչկոլումբոսյան ամերիկյան» հասարակությունների զարգացման առանձնահատկությունները:<br>6. Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները:<br>7. Չինական քաղաքակրթությունը ուշ միջնադարում. չինակենտրոն հասարակության և պետության ձևավորումը:<br>8. Հնդկաստանի հասարակության համակեցութային կերպափոխումները Մեծ մողոլների օրոք:<br>9. Ռեֆորմացիայի ազդեցությունը եվրոպական հասարակության վրա:<br>10. Հետադարձ կապ: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող գաղափարներ** |
|---|---|
| • Հիմնախնդիրների հետազոտում (անհատական կամ խմբային):<br>• Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում:<br>• Բանավեճեր, քննարկումներ:<br>• Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում: | • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում**<br>Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:<br>• **Կառուցվածք և գործառույթ**<br>Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հայոց պատմություն** - Հայաստանը միջնադարում, տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և միջնադարյան քաղաքակրթությունները:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Միջնադարյան եվրոպական և արևելյան գրականությունը, միջնադարյան |

| |
|---|
| պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - միջնադարյան հրաշալիքներ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ11, Մ14, Մ16, Մ22, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ29, Մ32, Մ33, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ42:** |

| |
|---|
| **Թեմա 6** |
| ***Նոր Եվրոպայի ծնունդը*** (8 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կհետազոտի և կվերլուծի Նոր Եվրոպայի ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, Նոր Եվրոպայի ու ներկայիս աշխարհի բազմատեսակ առնչությունները, նոր ժամանակների Եվրոպայի ականավոր գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>10.6.1 Կհետազոտի, կվերլուծի նոր ժամանակների պետական, հասարակական, սոցիալական և մշակութային զարգացումներն ու գործընթացները:<br>• Արժեհամակարգ-առաջնորդություն<br>10.6.2 Կուսումնասիրի նոր դարերի հասարակությունները, կարժևորի առաջնորդության արժեհամակարգը, որը հանգեցրեց նոր դարերի մի շարք հասարակությունների զարգացմանը:<br>• Հմտություն-խնդիրների լուծում<br>10.6.3 Կհետազոտի տարբեր պատմական մեդիա աղբյուրներ, կմեկնաբանի տարբեր հասարակությունների քաղաքակրթական մարտահրավերների հաղթահարման ուղիները՝ զարգացնելով խնդիրներ լուծելու հմտությունը:<br>• Գործողություն<br>10.6.4 Կուսումնասիրի սեփական համայնքը, կառանձնացնի այն մարտահրավերները, որոնց բախվում է իր համայնքը, և կկազմի խնդիրների լուծման իր տարբերակները: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրի վերակառուցումը, համակեցության հարաբերությունները Եվրոպայում:<br>2. Արդյունաբերական քաղաքակրթության առաջացումը. արդյունաբերական հեղաշրջումը, հետևանքները:<br>3. Հասարակական փոփոխությունները, բարեկեցության աճը, առօրյա կյանքն ու կենցաղավարությունը:<br>4. Գիտական նորարարությունները որպես հասարակության զարգացման շարժիչ ուժ: |

| |
|---|
| 5. Հետադարձ կապ: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Ընդհանրական խաչվող գաղափարներ |
|---|---|
| • Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն:<br>• Հիմնախնդիրների հետազոտում (անհատական կամ խմբային):<br>• Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում:<br>• Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում:<br>• Ռեֆերատ: | • **Գիտատեխնիկական նորարարություն**<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների, քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարակական զարգացման և առաջընթացի վրա:<br>• **Անհատական և մշակութային արտահայտում**<br>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: |

| Միջառարկայական կապերը թեմայում |
|---|
| **Հայոց պատմություն** - Հայաստանը նոր ժամանակներում, տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և նոր ժամանակների Եվրոպան:<br>**Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Նոր ժամանակների եվրոպական և արևելյան գրականությունը, եվրոպական պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Նոր ժամանակների հրաշալիքներ, արվեստի գործեր: |

| Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ |
|---|
| **Մ7, Մ10, Մ11, Մ14, Մ16, Մ21, Մ22, Մ23, Մ24, Մ25, Մ26, Մ29, Մ32, Մ33, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ42:** |

| Թեմա 7 |
|---|
| ***Համաշխարհային մշակույթը նոր ժամանակներում*** (8 ժամ) |
| **Նպատակ** |
| Աշակերտը կուսումնասիրի և կվերլուծի նոր ժամանակների համաշխարհային մշակույթի զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, նոր ժամանակների համաշխարհային մշակույթի ու ներկայիս աշխարհի բազմապիսի կապերը, ականավոր |

| |
|---|
| գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները: |
| **Վերջնարդյունք** |
| • Գիտելիք<br>10.7.1 Կհետազոտի նոր ժամանակներում ձևավորված մշակութային արժեքները և դրանց ազդեցությունը հասարակության զարգացման տարբեր բնագավառների վրա:<br>• Արժեհամակարգ-ստեղծագործականություն<br>10.7.2 Կուսումնասիրի նոր դարերի մշակույթը, կձևավորի ստեղծարար արժեհամակարգ:<br>• Հմտություն-հետազոտություն<br>10.7.3 Կհետազոտի զանազան պատմական մեդիա աղբյուրներ մշակույթի վերաբերյալ, կայցելի հեռավար բաց թանգարաններ և կլսի զանազան արվեստի գործերի մեկնաբանությունները:<br>• Գործողություն<br>10.7.4 Կուսումնասիրի սեփական համայնքը, կհամեմատի իր մշակույթի արժեքները նորդարյան հասարակության մշակութային արժեքների հետ: |
| **Թեմայի բովանդակություն** |
| 1. Կրթությունն ու գիտությունը:<br>2. Գիտատեխնիկական հեղաշրջումը:<br>3. Գեղարվեստական մշակույթը:<br>4. Մշակութային ճգնաժամը:<br>5. Հետադարձ կապ: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Ընդհանրական խաչվող գաղափարներ** |
|---|---|
| • Սահիկաշարերի պատրաստում:<br>• Պաստառների ձևավորում:<br>• Նշանավոր գործիչների մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, ակնարկների պատրաստում:<br>• Բանավեճեր, քննարկումներ:<br>• Նկարի վերլուծություն: | • **Անհատներ և հարաբերություններ**<br>Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:<br>• **Գիտատեխնիկական նորարարություն**<br>Գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարակական զարգացման և առաջընթացի վրա: |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Հայոց պատմություն** - Հայաստանը և հայկական մշակույթը նոր ժամանակներում, տվյալ ժամանակաշրջանի մշակութային, պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, նոր ժամանակների համաշխարհային մշակույթը և հայկական մշակույթը: |

| |
|---|
| **Աշխարհագրություն** - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:<br>**Հայոց լեզու** - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:<br>**Գրականություն** - Նոր ժամանակների համաշխարհային գրականությունը, պատմագրությունը և Հայաստանը:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - Նոր ժամանակների հրաշալիքներ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ** |
| **Մ7, Մ10, Մ11, Մ14, Մ16, Մ24, Մ25, Մ26, Մ29, Մ32, Մ33, Մ35, Մ36, Մ39, Մ40, Մ41, Մ42:** |

**11-րդ դասարան (Առաջարկվող ժամաքանակ՝ 68 ժամ)**

1. Աշխարհակալություններ (կայսրություններ) (10 ժամ)
2. Ազգային պետություններ (10 ժամ)
3. Ամբողջատիրական պետություններ (10 ժամ)
4. Ժողովրդավարական պետություններ (10 ժամ)
5. Հեղափոխություն (10 ժամ)
6. Գաղափարախոսություն (8 ժամ)

**Պետություն**

| |
|---|
| **Թեմա 1** |
| ***Աշխարհակալություններ (կայսրություններ) (10 ժամ)*** |
| **Նպատակ** |
| Աշակերտը կհետազոտի և կվերլուծի աշխարհակալությունների (կայսրություններ) ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, կործանման պատճառների ու հետևանքների, աշխարհակալությունների ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը, աշխարհակալությունների ականավոր գործիչներին, նրանց գործունեության առանցքային դրվագները: |
| **Վերջնարդյունք** |
